The last issue was published in May 1969, after months of financial crisis. In this issue, Bazarian published a discussion with Zaven Karakhanian, ARF member, about his «divorce from the Communism,» being the first time in more than three years of publication that politics came up on Armenia's pages.[60] Perhaps for this reason this magazine was never targeted by the Political Police. The only reference of it in the Police's archives is this last issue, which is attached on Bazarian's record as a proof of his «divorce» from his old ideology.[61]

The newsroom was located in 361 Santo Amaro Street and the Portuguese was the main language over its 30 pages. Certainly, the magazine *Armenia* was the most popular publication within the community since the beginning of the Armenian press in Brazil in mid-1940s – even more than the longest living magazine, *The Armenian Herald.* For this reason it is the most easily found Armenian publication in archives and libraries in São Paulo, although a complete collection could not be found.

## 8. DISCUSSION

The end of the magazine *Armenia* in 1969 and the Armenian Herald in 1971–1972 also marked the fall of the Armenian press produced in São Paulo. From early 1940s to early 1970s, the Armenians were used to have at least one ethnic publication sharing ideas, reports and ideologies about diaspora and the Armenian SSR. In more fertile moments such as 1947, four or more periodicals circulated simultaneously, sharing the same audience. On the other hand, in the 1950s, there was no publication to feed the community. This hiatus could be a trigger or a new wave of press in the second half of the 1960s, when two or three periodicals circulated in the city, even under political surveillance after the *coup d'état* in 1964.

---

[58] *Armenia* (São Paulo: year I, n. 5, January and February 1968), 3–4.
[59] *Armenia* (São Paulo: year II, n. 11, September 1968), 17–18.
[60] *ARMÊNIA*. Ano III, nº 16, maio/junho de 1969, pp. 3 e 13–15.
[61] *Criminal record n.* 95,621 – *Jacob Bazarian*, DEOPS, Public Archives of the State of São Paulo.

Although this paper aimed at covering the period between 1940–1970s, it is worth mentioning the existence of other periodicals which had a narrower scope, such as *Nor Gyank*, released in 1979 by ARF's youth; *Sipan*, created in January 1983 as the organ of the Armenian Apostolic Church of São Paulo, and still in circulation; *Messenger*, first published early 1990s as the newsletter of the Armenian Catholic Church; and *Massis*, an independent monthly based newsletter of Armenians in Rio de Janeiro, created and directed by Ara Leon Nevrouz since late 1990s.[62]

The lack of periodicals published purely in Armenian or both in Armenian and Portuguese does not mean the community in Brazil was isolated from other diasporic groups. Even publishing almost entirely in Portuguese, the lists of subscribers of the magazines *Ararat* or *Armenia* show that these periodicals circulated all over the world, notwithstanding the crucial decision of printing in the host society's language. Otherwise, it would be virtually impossible to keep an Armenian press in Brazil due to technical, financial, and logistic challenges.

Guided by the promotion of the history, culture and, mainly the Armenian cause, the Armenian press in Brazil remains a crucial part of the community dynamics and identity. Besides being an important tool of education and information for Armenians in Brazil, the ethnic press created spaces of sociability in which people met, families were started, and the community was keeping alive. The Armenian press is a mandatory way for those researchers who want to understand the social and political aspects of these immigrants in Brazil, especially the specificities about the political conflicts within the Armenian community, and how a shared memory and discourse was created by editorials, articles, and pictures published over the decades.

## BIBLIOGRAPHY

**Balakian Peter,** The Burning Tigris: the Armenian Genocide and America's response. (New York: Harper Perennial, 2004), 377–378.

**Bazarian Jacob,** Intuição Heurística: uma análise científica da intuição criadora. (São Paulo: Alfa-Ômega, 3ª ed., 1986).

**Bazarian Jacob,** Mito e Realidade sobre a União Soviética: análise imparcial do regime soviético por um ex-membro do Partido Comunista. (São Paulo: Record, 1973, 2ª edição revista e ampliada).

**Bazarian Jacob,** Por que Nós, os Brasileiros, Somos Assim? Os traços psicológicos característicos dos brasileiros, suas causas e consequências. (São Paulo: Alfa-Ômega, 2ª ed., 1991).

**Ferro Marc,** A Manipulação da História no Ensino e nos Meios de Comunicação. (São Paulo: Ibrasa, 1983).

**Lesser Jeffrey,** Negotiating National Identity: Immigrants, Minorities, and the Struggle for Ethnicity in Brazil. (Durham, NC: Duke University Press), 1999.

**Mouradian Claire,** L'Arménie: de Staline à Gorbatchev – histoire d'une république soviétique. (Paris: Ramsay, 1990).

**Vartanian Yeznik,** Brazilioy Hay Kaghutë: badmagan deghegutiunner ev jamanagakrutiun 1860-ên mintchev 1947-i vertchë. (Buenos Aires: Siphan, 1948). (In Armenian).

[62] *Massis* (Rio de Janeiro: year V, n. 45, June 2001).

**ԷՅՏՈՐ ԴԵ ԱՆԴՐԱԴԵ ԿԱՌՎԱԼՈ ԼՈՈՒՐԵՅՐՈ**
*Սան Պաուլուի պետական համալսարան, Բրազիլիա*
heitorloureiro@gmail.com

# «ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆԸ». ՍԱՆ ՊԱՈՒԼՈՒԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ (1940–1970-ԱԿԱՆ ԹԹ.)

Հոդվածի նպատակն է վերլուծության ենթարկել Սան Պաուլուի հայ մամուլը 1940–1960-ական թվականներին:

Այն գլխավորապես կենտրոնացել է այն սահմանումի վրա, որը կատարել են հայ մամուլի տարբեր օրգանները, որոնք կոչված են եղել պաշտպանել և հաստատել «հայերի ձայնը» Սան Պաուլուի համայնքում: Այս սահմանումը ցույց է տալիս Բրազիլիայի ամենամեծ քաղաքում բնակվող հայերի մեջ եղած քաղաքական նրբերանգները, հատկապես Խորհրդային Միության ամենափոքր հանրապետության պաշտպանության հարցում, որը վիճելի հարց էր քաղաքական դիրքորոշումների բազմազանության պատճառով, որն ունեցել են բրազիլահայերի տարբեր խմբերը երկրորդ համաշխարհային պատերազմի և այնուհետև՝ սառը պատերազմի համատեքստում: Բրազիլական քաղաքական դաշտը, որն ուժեղ կերպով աջքի էր ընկնում ավտորիտար և հակակոմունիստական բնույթով, մեծացնում էր այդ հակադրությունները Սան Պաուլուի ներգաղթածների խմբերի վրա ունեցած իշխանությամբ և վերահսկողությամբ, հատկապես այն խմբերի վրա, որոնք կապեր ունեին ԽՍՀՄ-ի հետ: Այս առումով Սան Պաուլուի հայ մամուլի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալ, թե ինչպես քաղաքական բանավեճը հիմնված էր ոչ միայն հայկական խնդիրների, այլև Բրազիլիայի քաղաքական մթնոլորտի վրա:

Հոդվածը քննում է այդ բոլոր բարդ իրավիճակները, ինչպես նաև ներկայացնում 1940–1960-ական թթ. Սան Պաուլուի հայ մամուլի հավելված՝ ուղղորդելու և խրախուսելու նոր ուսումնասիրություններ:

Հոդվածում քննության են առնված մասնավորապես հետևյալ պարբերականները.

1. «Վերելք» (1945–1947), հայերեն-պորտուգալերեն երկշաբաթաթերթ, տպագրվել է «Սան Պաուլուի Հայկական միություն» մշակութային ընկերակցության կողմից: Այն առաջին բրազիլահայ պարբերականն էր, որ ունեցել է որոշ պարբերականություն: Ունեցել է խորհրդամետ կողմնորոշում, քաջալերել հայերի հայրենադարձությունը Խորհրդային Հայաստան: Պարբերականի ակտիվ հոդվածագիրներից էր «Սան Պաուլուի Հայկական միության» փոխնախագահ Ժակոբ (Հակոբ) Բազարյանը (1919, Մարաշ – 2003, Բրազիլիա), Բրազիլիայի համայնավար կուսակցության գործիչներից՝ փիլիսոփա և սոցիոլոգ, մի շարք պորտուգալերեն գրքերի հեղինակ:

2. «Ararat – a voz do povo armênio» («Արարատ. հայ ժողովրդի ձայնը», 1946–1947, տպագրվել է 20 համար): Ամսաթերթ, մեծ մասամբ պորտուգալերեն: Թերթի

փաստացի խմբագիրը Ժակոբ Բազարյանն էր, որը թեև «Վերելքում» արտահայտում էր իր խորհրդամետ գաղափարները, սակայն ցանկանում էր սեփական մամուլն ունենալ: Թերթի հոդվածագիրներից էր իր գործունեությունը «Վերելքում» սկսած Լևոն Ցակուբյանը (ծն. 1926, Հալեպ), որը թերթին աշխատակցել է մինչև իր ձերբակալությունը 1949-ին: Իր հոդվածներում Ցակուբյանը քննադատաբար անդրադարձել է Հայաստանի և Սփյուռքի հիմնախնդիրները: Ի տարբերություն այլ ձախակողմյան և էթնիկ պարբերականների՝ «Արարատը» չի եղել ընդհատակյա հրատարակություն: 1952-ին այն ունեցել է 350 բաժանորդ (որոնց թվում էր հայտնի բրազիլացի գիտնական և համայնավար գործիչ Կայո Պրադո Ժունիորը): Բաժանորդների այս թիվը չի նշանակում, որ բոլորը եղել են խորհրդային կողմնորոշում ունեցողներ. հայ ընթերցողը թերթից տեղեկացել է հայաստանյան նորություններին և համայնքի անցուդարձին:

3. «Հայաստանի ձայն» (1947–1949), հայերեն-պորտուգալերեն պարբերական: Գլխավոր հոդվածագիրը եղել է խմբագրակազմի անդամ Երվանդ Մխիթարյանը (1903, Կարին – 1976, Բրազիլիա) իր լրագրողական գործունեությունը սկսել է Բրազիլիայում (Սան Պաուլուում) տպագրված առաջին հայկական պարբերականներում («Եռանդ» և «Կայծ») և հայկական ռադիոժամում: Չնայած Մխիթարյանը սոցիալ-դեմոկրատ էր, «Հայաստանի ձայնն» իր գաղափարախոսությամբ շատ տարբեր չի եղել համայնավար ուղղվածություն ունեցող «Արարատից»:

4. «Revista Cultural Brasil-Armênia» («Բրազիլահայ մշակութային հանդես», 1947–1950, 1957–1958), հայերեն-պորտուգալերեն պարբերական (36 էջ): Հրատարակվել է «Հայկական մեղեդիներ» գեղարվեստական միության կողմից: Ներկայացրել է բրազիլացի և հայ բանաստեղծներին, Բրազիլիայի պատմությունը և հայ ժողովրդի պատմությունը պորտուգալերեն: Հանդեսում տեղ է տրվել նաև քաղաքական բանավեճին. Մասնավորապես Հայ հեղափոխական դաշնակցությունը քննադատել է Խորհրդային Հայաստանը պաշտպանողներին, հայրենադարձությունը և ձախակողմյան մամուլին:

5. «Tribuna Armênia» («Հայկական ամբիոն», 1962–1970), հայերեն-պորտուգալերեն ամսաթերթ: Հրատարակել է Բրազիլահայ միությունը: Նախապես կազմված է եղել հայ ուսանողներից՝ ի հակակշիռ ՀՀԴ-ի՝ համայնքում ունեցած իշխանության: Առաջին խմբագիրն էր Վարուժան Պուրմայանը: 1963-ի ապրիլյան համարում հայոց Մեծ եղեռնը առաջին անգամ բրազիլական մամուլում որակվել է որպես «ցեղասպանություն»:

«Armênia» («Հայաստան», 1967–1969): Հրատարակել է Ժակոբ Բազարյանը, որը Բրազիլիա էր վերադարձել ԽՍՀՄ-ում անցկացրած 16 տարիներից հետո: Նա հրաժարվել էր համայնավարական գաղափարներից և մինչև «Արմենիայի» հրատարակումը բրազիլական մամուլում հանդես է եկել խորհրդային կյանքի մասին հոդվածներով: Լուսաբանել է համայնքային կյանքը և արտատպել լուրեր Խորհրդային Հայաստանից: Որոշ ֆինանսական աջակցություն է ստացել խորհրդային «Ռիա նովոստի» լրատվական գործակալությունից:

Հետագայում Բրազիլիայում լույս են տեսել այլ հայկական պարբերականներ ևս՝ «Նոր կյանքը» (1979), «Սիփանը» (1983), «Լրաբերը» (1990-ականների սկիզբ) և «Մասիսը» (1990-ականների վերջ):

Թեև վերոնշյալ թերթերը հիմնականում տպագրվել են պորտուգալերեն՝ դրանք տարածվել են ամբողջ աշխարհում: Ներկայացնելով հայոց պատմությունը, մշակույթը և հայ դատը՝ բրազիլահայ մամուլը եղել է համայնքի զարգացումների և ինքնության մի կարևոր մասը: Այս պարբերականներն անհրաժեշտ աղբյուր են այն հետազոտողների համար, որոնք ցանկանում են ըմբռնել Բրազիլիայի այս ներգաղթյալների սոցիալական և քաղաքական խնդիրները, հատկապես հայ համայնքի ներսում առկա քաղաքական բախումները, և թե ինչպես են տասնամյակներ շարունակ տպագրված խմբագրականները, հոդվածները և լուսանկարները ստեղծել մի ընդհանուր հիշողություն և հաղորդակցություն:

**ЭЙТОР ДЕ АНДРАДЕ КАРВАЛО ЛОУРЕЙРО**
*Государственный университет Сан-Паулу, Бразилия*
heitorloureiro@gmail.com

# «ГОЛОС АРМЯНСКОГО НАРОДА». АРМЯНСКАЯ ПРЕССА САН-ПАУЛУ (1940–1970 гг.)

Целью данного исследования является анализ армянской прессы Сан-Паулу 1940–1960 гг. Предметом рассмотрения стали высказываемые различными органами периодической печати идеи, (положения), представляющие и утверждающие «голос армян» в общине Сан-Паулу. Этот обзор позволяет выявить все многообразие политических пристрастий в среде армян крупнейшего города Бразилии и, прежде всего, их отношение к одной из самых малых республик Советского Союза – Армянской ССР. Это был вопрос определяющий многообразие политических позиций (этот вопрос, был положен в основу формирования политических позиций) армян Бразилии, в контексте этапов и итогов Второй мировой войны, а позже и холодной воины.

Ярковыраженный авторитарный и антикоммунистический настрой бразильской политики усугублял разногласия в среде армян, власть же при этом осуществляла руководство и контроль над иммигрантскими группами Сан-Паулу, особенно над теми, что имели контакты с СССР. В этом смысле исследование армянской прессы Сан-Паулу позволяет понять, что причиной политических дебатов были не только вопросы армянской общины, но и политическая атмосфера в стране.

В статье рассматриваются сложные отношения различных политических групп, и в качестве документальных свидетельств представлены также материалы армянской прессы 1940-1960 гг. являющие также материал и для дальнейших исследований. Рассмотрены, в частности, следующие издания (в основном двуязычные – на армянском и португальском): «Верелк» («Подъем»), «Арарат», «Голос Армении», «Бразильско-армянский журнал», «Трибуна Армении», «Армения».

В статье в частности исследованы следующие издания:

Газета Верелк – «Подъем» (1945–1947), издавалась на португальском и армянском, раз в две недели культурной ассоциацией Союза армян Сан-Паулу. Первая бразильская-армянская газета, выходившая относительно регулярно. Имела просоветскую направленность, поощряла репатриацию армян в Советскую Армению. Одним из активных авторов был вице-президент союза армян Сан-Паулу, Жакоб (Акоп) Базарян (1919, Мараш – 2003, Бразилия), деятель Бразильской коммунистической партии, философ и социолог, автор ряда книг на португальском языке.

Ararat – a voz do povo armenio – Ежемесячник «Арарат. Голос армянского народа» (1946–1947, было издано 20 номеров), в основном на португальском. Фактическим редактором газеты был Жакоб Базарян, который несмотря на возможность выражать свои просоветские идеи в «Верелке», хотел иметь собственную газету.

Одним из основных сотрудников газеты был Левон Якубян (1926, Алеппо), начавший свою деятельность в «Верелке» и сотрудничаваший с «Араратом» до своего ареста в 1949 году. В своих статьях Якубян обсуждал проблемы Армении и диаспоры. В отличие от других левых и этнических газет, «Арарат» не был подпольным изданием. В 1952 году газета имела 350 подписчиков (в их числе - знаменитый бразильский ученый и активист коммунистической партии Кайо Прадо Жуниор). И хотя не все подписчики разделяли советские идеи, через газету армянские читатели знакомились с новостями Армении и армянской общины Сан Паулу.

Аястани дзайн – «Голос Армении» (1947–1949), армяно-португальское периодическое издание. Основным автором был член редакционной коллегии Ервант Мекитарян (Мхитарян, 1903, Карин – 1976, Бразилия). Свою журналистскую деятельность он начал в первых бразило-армянских изданиях («Ерант», «Гайдз») и армянском радиочасе. Хотя Мекитарян был социал-демократом, редакционная направленность его газеты не особо отличалась от прокоммунического «Арарата».

Revista Cultural Brasil-Armenia – «Бразило-армянский культурный журнал» (1947–1950, 1957–1958), армяно-португальское издание (36 страниц), издавался культурной организацией «Армянская мелодия». Представлял бразильских и армянских поэтов, историю Бразилии и историю армянского народа на португальском. На страницах журнала велись в том числе и политические дебаты: армянская революционная партия Дашнакцутюн критиковала защитников Советской Армении, репатриацию и левую прессу.

Tribuna Armenia – «Армянская трибуна» (1962–1970), ежемесячник, на армянском и португальском. Издавался Ассоциацией бразильских армян, первоначально – группой студентов, целью которых было создать противовес партии Дашнакцутюн, доминирующей в общине. Первым редактором был Варужан Бурмаян. В апрельском номере 1963 года действия турецких властей в 1915 году против армян впервые былы охарактеризованы в бразильских СМИ как «геноцид».

Armenia – «Армения» (1967–1969). Издателем был Жакоб Базарян, возвратившийся в Бразилию после 16 лет проживания в СССР. Философ Базарян отказался от коммунистических идей. До «Армении» в бразильской прессе писал статьи о советской жизни. Газета освещала устройство социалистического общества, печатала новости из Советской Армении. Советское информационное агентство «РИА Новости» оказывало некоторую финансовую поддержку.

Позже, в Бразилии издавались также другие армянские периодические издания: «Нор гянк» («Новая жизнь», 1979), «Сипан» (1983), «Посланник» (начало 1990-х) и «Масис» (конец 1990-х).

Эти издания печатавшиеся на португальском языке, распространялись по всему миру. Бразильская армянская пресса, знакомившая читателей с армянской историей и культурой, а также с требованием армян признать геноцид, представляла собой важную часть развития и самопознания общины. Редакционные материалы (статьи и фотографии) армянских изданий, являются необходимым источником для исследований социальных и политических аспектов иммигрантов Бразилии, особенно политических конфликтов внутри армянской общины, а также позволяют представить этапы формирования основополагающих идей.

**ՀՐԱՆՈՒՇ ԶԱՔՅԱՆ**
*Բանասիրական գիտությունների թեկնածու*
*Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ*
hmardoyan71@mail.ru

# ԿՐԿՆԱՍԵՌ ԲԱՅԵՐԻ ԳՐԱԲԱՐՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Կրկնասեռությունը բայի իմաստային կառուցվածքում քերականական տարբեր սեռերի նշանակությունների համատեղումն է՝ առանց բառական-քերականական լրացուցիչ փոփոխությունների[1]: Այն բնորոշ է հայերենի բայական համակարգին պատմական զարգացման բոլոր շրջաններում[2]:

Հին հայերենն ունի շուրջ 500 կրկնասեռ բայեր, բայերի կեսից ավելին, ինչպես վկայում է միջինհայերենյան մի շարք բնագրային աղբյուրների ուսումնասիրությունը, շարունակում է գործածվել նաև միջին հայերենում, ընդ որում շուրջ 200 բայեր՝ առանց ձևաիմաստային փոփոխություններ կրելու, իսկ մի քանի տասնյակ բայեր՝ ձևի կամ իմաստային կառուցվածքի որոշակի փոփոխություններով[3]:

Գրաբարի համեմատությամբ բայերի կրած *ձևային փոփոխությունները* սովորաբար դրսևորվում են գրաբարյան բառերի տարբերակներով՝ միջին հայերենին բնորոշ հնչյունափոխությամբ, կարող են արտահայտվել նաև լծորդի և բայի կազմության, ինչպես նաև հնչյունական մասնակի փոփոխություններով:

*Բառիմաստային փոփոխությունները* բնութագրվում են իմաստային նոր առումներով:

Միջին հայերենում գրաբարի կրկնասեռ բայերի ձևաիմաստային փոփոխության դրսևորումները հիմնականում հանգում են հետևյալին.

ա) *Գրաբարի կրկնասեռ բայերը ձևով փոփոխվել են, բայց պահպանել են նույն իմաստները:*

բ) *Գրաբարի բայերը փոխել են և՛ ձևը, և՛ իմաստային կառուցվածքը:*

գ) *Գրաբարի բայերը ձևով մնացել են նույնը, բայց ձեռք են բերել նոր նշանակություն(ներ):*

Անդրադառնանք խնդրո առարկա բայերի քննությանը՝ սկսելով առաջին ենթախմբից:

---

[1] **Աբրահամյան Ա.**, 1962, 672:

[2] Արդի հայ քերականագիտության մեջ կրկնասեռությունը կապվում է ներգործական և չեզոք սեռերի նշանակությունների համատեղման հետ, քանի որ մեր լեզվի այս շրջանում առանց բայի լրացուցիչ փոփոխությունների կարող են համատեղվել ներգործական և չեզոք սեռերը (տե՛ս **Աբրահամյան Ա.,** 720), թեև որոշ ուսումնասիրողներ ընդունում են նաև կբ, չբ կրկնասեռությունը:

[3] Միջին հայերենի բառարանում, 2009, որի համար հիմք են ծառայել 12–16-րդ և մասամբ 17-րդ դարերում գրի առնված բոլոր կարգի տպագիր և անտիպ գործերը, հիշատակվում են շուրջ 30 կրկնասեռ բայեր, ինչից հետևում է, որ միջինհայերենյան կրկնասեռ բայերի ընդհանուր թիվը հասնում է մոտ 300-ի:

**Անյուսանալ** և **երկիրպագանել** բայերը միջին հայերենում պահպանել են կրկնասեռությունը և իմաստային նույն կառուցվածքը, բայց կրել են ձևի փոփոխություն. գրաբարում **անյուսանալ** կրկնասեռ բայը ունի նբ՝ *անհուսալի համարել* և չբ՝ *հուսահատվել* նշանակությունները: Միջին հայերենում հանդիպում է բայի ե լծորդության պարզ տարբերակը, հմմտ. **անյուսել-** նբ-հուսահատեցնել. *Գայ սատանայ և սկսի <u>անյուսել</u> քեզ ի մեղս (ՄՀԲ, 60),* **անյուսիլ**[4]- չբ- հուսահատվել. *<u>Մի՛ անյուսիր</u>, ո՛վ ողորմելի (ԳՏՈ, 209):*

**Երկիրպագանել** բայը պահպանել է գրաբարյան *պաշտել, երկրպագություն մատուցել* նբ, չբ նշանակությունները, բայց ներկայանում է **երկիրպագել, երկրպագել** բառատարբերակներով. *Ըստողծողին տացուք զփառս և <u>երկիրպագեմք</u> խաչին նորա (ՄՀԲ, 270)*: *Ընդ աջմէ հոր նստան և <u>երկրպագեցին</u> նմա (ԳՏՈ, 179):*

**Սգալ, օգտել, սովորել** և **բրդել** կրկնասեռ բայերը կրել են հնչյունական մասնակի փոփոխություններ՝ **սքալ օկտել/իլ, սովրիլ, բրտել**[5].

Գրաբարյան բառերի հնչյունափոխված ձևերը, որոնք դարձել են միջին գրական հայերենի սեփականությունը, ամենայն հավանականությամբ, խիստ կենսունակ են եղել և՛ ժամանակի ժողովրդախոսակցական լեզվում, և՛ բարբառներում, բայց գրական լեզվին սովորաբար չեն փոխանցվել:

Առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում և զգալի թիվ են կազմում այն կրկնասեռ բայերը, որոնք միջին հայերենում կրել են ոչ միայն ձևի, այլև իմաստային կառուցվածքի փոփոխություն, օրինակ՝ **հոտոտել** բայը պահպանել է կրկնասեռությունը, բայց կորցրել չեզոք սեռի *մոտենալ, դիպչել* նշանակությունները, կրել է նաև լծորդի փոփոխություն, հմմտ. **հոտոտալ-**նբ, չբ-*հոտոտել, հոտ քաշել. Երբ մարդն ի յիւրն <u>հոտոտայր,</u> նայ հոտն գայր մուշկ ու ամբար: Քանի զնա <u>կու հոտոտայր</u>, սիրոյն լինէր խև ու խումար,* **հոտվրալ.** *Թէ զծաղիկն <u>հոտվրաս</u>, զըղեղան կալուածն բանայ,* **հոտտալ.** *Երբ <u>հոտտան,</u> նայ հոտած հոտ գայ (ՄՀԲ, 436):*

Ընդգծենք մի կարևոր հանգամանք. եթե գրաբարի կրկնասեռ բայերը սովորաբար բազմիմաստ են և անգամ կարող են համատեղել զոնե արդի լեզվամտածողությամբ անհամատեղելի նշանակություններ, ապա ձևապես միջինհայերենյան դիտվող տարբերակները լեզվի զարգացման տվյալ փուլում այլևս չունեն իմաստային լայն ընդգրկումներ, ընդհանուր առմամբ գործածվում են նախկին իմաստների զգալի սահմանափակմամբ: Այս կարգի բայերում սովորաբար պահպանվում են գրաբարյան բազմիմաստ բայերի առաջնային, ուղղակի իմաստները, իսկ երկրորդական նշանակությունները դրսևորվում են խիստ հազվադեպ, օրինակ՝ **հաւասարել** կրկնասեռ բայը գրաբարում ունի նբ-*1. Հավասար դարձնել, հավասարեցնել, նմանեցնել, 2. Մասնակից, կցորդ դարձնել,* չբ-*1. Հավասար դառնալ, հավասարվել, նմանվել, 2. Համեմատվել, բաղդատվել, 3. Մասնակից, կցորդ լինել, ձայնա-*

[4] Ինչպես գիտենք, գրաբարում քերականական նպատակներով կատարվող *ե-ի* լծորդափոխության նշանակությունը միջն հայերենում փոխվում է. *ի* լծորդը սկսում է գործադրվել նաև սեռի փոփոխություն առաջ բերելու նպատակով՝ ներգործականի և կրավորականի հանդեպ արտահայտելով նաև միջին նշանակություն *(Տե՛ս **Աբրահամյան Ա.,** 306):*

[5] *...<u>ոչ օկտէ</u> զայր: Ով կարդայք և <u>օկտիք</u> ի սուրբ յաղօթս ձեր (ՄՀԲ, 823): Վա՜յ ձեզ որ ծիծաղիք, զի <u>սքացէք</u> և լացէք (ՄՀԲ, 722): Որ զրաստն <u>սովրի</u> առաւել վասն նետելոյ (ՄՀԲ, 709): <u>Բրտեա</u> զհաց, զի եմ քաղցած (ՄՀԲ, 129)* և այլն:

*կից լինել* նշանակությունները (ՆՀԲ, 75, ԳԲ, 743): **Հաւարել** միջինհայերենյան տարբերակի նշանակություններն են՝ նբ-*հավասարեցնել. Գլխուն զինութիւն տայ և մազն <u>հաւրէ</u> (ՄՀԲ, 420),* **հաւրիլ**-չբ-*հավասարվել, հավասարապես տարածվել. Եղնէ եղընդնի ի զրաստուն երեսն ու ի բազկունքն և ապա <u>հաւրի</u> ի յամէն մարմինն (ՄՀԲ, 412):*

**Շաղել** կրկնասեռ բայը ևս գրաբարում բազմիմաստ է. նբ-*1. Պատել, պարուրել, 2. Կապել, կապկպել, 3. Փաթաթել, ոլորել, 4. Շաղախել, 5. չբ. Փաթաթվել, ոլորվել, 6. Կապվել, միակցվել, կաշկանդվել, 7. Միխրճվել* (ՆՀԲ, 461, ԳԲ, 305)*:* **Շաղղել** բայի հասկացության ծավալը նեղացել է. նբ-*շաղախել. <u>Շաղղէ՛</u> ջրով ու շինէ՛ խուրսեր* **շաղղիլ**-չբ-*շաղախվել. Ապա ա՛ռ աղ և խառնես ի հողն ափ մի մանր, որ <u>շաղղի</u> յիրար (ՄՀԲ, 586)*[6]*:*

**Արձակել** կրկնասեռ բայի գրաբարյան նշանակություններն են նբ-*1. Կապերը քանդել, արձակել, բաց թողնել, ներել, 2. Թողնել, թույլ տալ, 3. Ուղղել, ուղարկել, 4. Զգել, նետել, 5. Բաց անել, դուրս հանել, բուսցնել, 6. Տարածել, սփռել, բարձրացնել*, չբ- *Արձակվել* (ՆՀԲ, 2235, ԳԲ, 215): Միջին հայերենում բայի նբ նշանակությունները արտահայտվում են **արձկել** բայով՝ *թողնել. Այսօր <u>արձկէ՛</u> զհանգուցդ մինչ ես ի կենդանութիւն (ՄՀԲ, 91),* իսկ չբ- *տարածվել* նշանակությունը՝ հնչյունական տարբերություններ ունեցող **արձկնալ** *(Քանի երթայ՝ նա աճէ և <u>արձկնայ</u>),* **արձկենալ** *(Նա ուժովնայ երակն և <u>արձկենայ</u>),* **արձակնալ** *(Այս լուսամուտս ժամ կայ <u>արձակնայ,</u> և ժամ կայ որ նեղնայ),* **արձականալ** *(<u>Արձականայ</u> զաղտ շնչահանքն)* բառային տարբերակներով *(ՄՀԲ, 91)*:

Չեզոք և ներգործական սեռի նշանակությունները միջին հայերենում ձևային տարբերակներով է արտահայտում նաև **ճապաղել** կրկնասեռ բայը՝ **ճապղիլ**՝ չբ *ծավալվել, տարածվել. Որ <u>ճապղի</u> յամէն մարմինն (ՄՀԲ, 470),* նբ՝ **ճապաղգել**[7] *տարածել, սփռել. ԶԱրտաշէսէ, զհարսանեաց նորին, <u>զճապաղգելոյն</u> զդահեկանս, արքային ի դուռն տաճարին (Ստ. Ռօշքայ, 15):*

Իմաստափոխությունը, ըստ էության, արտահայտվում է գրաբարյան բառերի բազմիմաստության վերացմամբ, այսինքն՝ տեղի է ունենում իմաստների սահմանափակում՝ կապված հիմնական իմաստի պահպանման, երկրորդական և փոխաբերական նշանակությունների վերացման հետ:

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ բայերի ինչպես գրաբարյան, այնպես էլ միջինհայերենյան տարբերակները կրկնասեռ են: Բայց բազմաթիվ դեպքերում միջինհայերենյան նորակազմությունը արդեն կրկնասեռ չէ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրկնասեռության չեզոքացում ապրած նորակազմության կողքին հիմնականում շարունակում են գործածվել նաև բայերի գրաբարյան կրկնասեռ տարբերակները, կարելի է ասել՝ միջին հայերենում §հանդիպում¦ են լեզվական հին և նոր ձևերը, որոնք, ըստ լեզվի զարգացման

---

[6] Հանդիպում է նաև **շաղվել** ներգործական սեռի բայը՝ *շաղախել* նշանակությամբ. *Զամէնն աղա՛ և մաղէ՛ զառնալեզվի ջրով <u>շաղվէ</u> (ՄՀԲ, 586):*

[7] Տե՛ս **Պողոսյան Ն.,** 2012, 130:

ներքին օրինաչափությունների, մրցակցում են, արդյունքում (ինչպես ցույց է տալիս տարժամանակյա քննությունը)՝ կենսունակությունը սովորաբար պահպանում է կրկնասեռության չեզոքացում ապրած տարբերակը[8]:

Օրինակ՝ **վայելել** բայը գրաբարում բազմիմաստ է. նբ, չբ- *1. Ստեղծած բարիքը հաճույքով օգտագործել, 2. Որևէ կարգի հաճույք ստանալ, 3. Հաճելի կյանք վարել, բավականության մեջ գտնվել, փափկանալ, 4. Հաղորդակից, մասնակից լինել վայելքին* (ՆՀԲ, 776, ԳԲ, 497)*:* Միջինհայերենյան **վայլել** տարբերակն ունի միայն *որևէ հաճույք ստանալ, օգտվել մի բանից* նբ նշանակությունները՝ *Եղբ'այր, տղա եմ զենէհար, դեռ չեմ <u>վայլեր</u> զայս աստըւորս (ՄՀԲ, 727):*

Միջին հայերենում գործածվող **հատանել** կրկնասեռ բայի կողքին գործածության մեջ է մտնում ի լծորդության չեզոք սեռի **հատնիլ** տարբերակը՝ *սպառվել, վերջանալ* նշանակություններով[9]. *<u>Հատնի</u> և մնա պինդ մեջքն ու անուշնա շունչն (ՄՀԲ, 413):*

**Հեղձանել** կրկնասեռ բային զուգահեռ գործածվում է վերջինիս չեզոք սեռի պարզ տարբերակը՝ **հեղձկիմ**- *խեղդվել, խեղդամահ լինել. Վարանեալ, նեղեալ և <u>հեղձկեալ,</u> մղծկեալ ի խորհուրդ սրտիս (ՄՀԲ, 422):*

**Թքանել** կրկնասեռ բայի *(նբ-արհամարհանքով մերժել. Ծողէր զմուրսն և <u>թքանէր</u> (ՄԳ Ա, 49), չբ- թուքը դուրս նետել Պեղծ բերանով <u>թքանէին</u> Յայն որ թքով լոյս ետ կուրին (ՆՇՄ, 943))* **թքնել** տարբերակը ունի միայն ներգործական սեռի իմաստ. *Օգտէ հազին և արիւն <u>թքնելուն</u> (ՄՀԲ, 255)*[10] և այլն*:*

Որոշ դեպքերում գրաբարի կրկնասեռ բայերը ձևով մնացել են նույնը, բայց ենթարկվել են իմաստափոխության, օրինակ՝ **կարդալ** բայը գրաբարում բազմիմաստ կրկնասեռ բայ է՝ հետևյալ իմաստներով՝ *1. Ձայնել, գոչել, աղաղակել, 2. Ձայն տալ, կանչել, հրավիրել, 3. Անունը տալ, անվանել, հորջորջել, 4. Բարձրաձայն կարդալ, 5. Ընթերցել (ՆՀԲ, 1067, ԳԲ, 639):* Միջին հայերենի բառարանում հիշատակվող **կարդալ** բայը նբ է՝ *սովորել, ուսանել* նշանակություններով *(ՄՀԲ, 364). Այնոր համար որ ի վարպետէ չէ <u>կարդացել,</u> և թէ կարդացել է՝ նա չէ հասկցեր (ՄՀԲ, 364):* Զուգահեռ գործածություն ունի նաև բայի մեկ այլ ձևային տարբերակ՝ **կարդել,** դարձյալ որպես նբ՝ *կարդալ, ընթերցել* իմաստներով. *Ով <u>կարդէք,</u> յաղօթս յիշեցէք:* Չնայած միջին հայերենում բայը հանդիպում է ոչ միայն նբ-ընթերցել. *(Եւ յորժամ <u>կարդացին</u> զթուղթն, հատին զգլուխն),* այլ նաև չբ-*ձայն տալ, կանչել* գրաբարյան նշանակություններով *(Մի անտես առներ վասն որոյ հանդերձեալ եմ <u>կարդալ</u> առ քեզ: Աղաղակաւ առ Աստուած <u>կարդային</u> ի տուէ և ի գիշերի (ՄՀԲ, 364)),*

---

[8] Կարևոր է նշել, որ արդի հայերենի բառապաշար սովորաբար մուտք են գործում բայերի գրաբարյան ձևային տարբրակները, օրինակ՝ *վայելել* բայը գրաբարում կրկնասեռ է, *վայլել*՝ միջինհայերենյան տարբերակը՝ նբ, արդի հայերենում ունենք *վայելել* բայը՝ որպես նբ:

[9] Ի դեպ, նշված բայիմաստները կային նաև գրաբարում՝ բայի ածանցավոր տարբերակում, որը ուներ նաև 18 այլ նշանակություններ՝*անջատել, պատռել, փորել, վճռել, դադարել* և այլն *(ՆՀԲ, 2235, ԳԲ, 46):*

[10] Նկատենք, որ բայը լծորդական, ինչպես նաև պարզ և ածանցավոր կազմությամբ տարբերակներ, այսինքն՝ փոխանցումներ ունի նաև հին հայերենում, մասնավորապես՝ *թքնուլ (նբ, չբ)*, *թքել (նբ, չբ)*, *թքլթքել(չբ) (տե՛ս ՆՀԲ, 824, ԳԲ, 497)*:

ակնհայտ է իմաստային տեղաշարժը. գրաբարի համար առաջնային նշանակություններն իրենց տեղը զիջել են երկրորդական համարվող իմաստներին՝ հետագայում բոլորովին մոռացության մատնվելով:

Գրաբարյան կրկնասեռ բայերի միջինհայերենյան որոշ տարբերակներ, բառիմաստի ընդլայնման երևույթով պայմանավորված, երբեմն զուգահեռաբար ձեռք են բերել նոր իմաստ(ներ), ինչպես **խռովել** բայը, որը թեև շարունակում է գործածվել գրաբարյան նշանակություններով, այն է՝ նբ-հուզել. *եւ խռովէ զխաղաղացեալ ոգին (ԳՏՔԱ, 31),* չբ- հուզվել, ալեկոծվել. *Իմ եա՛ր, քեզ վատ չեմ ասեր, դու հիմի է՞ր ես խըռովեր (ՆՔ, 43)*, միջին հայերենում ունի նաև չեզոք սեռի *նեղանալ, մեկի հետ չխոսել* նոր նշանակությունը . *Այբէն մինչև ի քէն զանկատ անեմ ես, Բարև յէ՞ր չես ի տար, սուտ խռովեր ես: Միրտ իմ, ընդէ՞ր ես խռովել (ՄՀԲ, 336):*

Ինչպես նշեցինք, *և* լծորդության որոշ կրկնասեռ բայեր միջին հայերենում ունեն լծորդական տարբերակներ, օրինակ՝ **բխել**[11] կրկնասեռ բայի կողքին միջին հայերենում գործածվում է նաև **բխալ-**չբ *(Մէջէն պաղ աղբյուր կու բխայ (ՄՀԲ, 120)*, **փայլել** բայի կողքին՝ **փայլալ-** չբ-փայլել *(Դու արա ինձ մտիկ, թէ ոնց կու փայլամ (ՄՀԲ, 779)),* **շնչել** բայի կողքին՝ **շնչալ-**չբ-շնչել, (փչել. *Շնչայ ուժով և լինի փորն մեծ Երբ որ հարաւ քամին շնչայր, իր ձագերուն սա մահ կու տայր (ՄՀԲ, 841, 599))* տարբերակները, որոնք, շատ դեպքերում պայմանավորված լինելով հեղինակի ոճական ինքնատիպությամբ, երբեմն՝ հանգավորմամբ կամ ուղղակի վրիպակով, հետագայում տարածում չեն գտել:

7–10-րդ դարերում, ինչպես գիտենք, մի շարքածանցավոր բայերին զուգահեռ սկսել են գործածվել նրանց ածանցազուրկ ձևերը, ինչպես՝ *տարածանել-տարածել, հատանել-հատել* և այլն: Միջին հայերենում դիտվում է նաև հակառակ երևույթը. պարզ բայերի կողքին (թե՛ համադրական, թե՛ սեռային զուգահեռությամբ արտահայտվող կրկնասեռություն ունեցող) սկսում են գործածվել բաղադրության ածանցով տարբերակներ, որոնք որոշ դեպքերում ունեն նաև այլ լծորդ, ինչպես՝ **վառել - վառենալ, հաճել - հաճենալ, հաշտել -հաշտենալ**[12] **պնդել-պնդանալ** և այլն. *Այն մարդն, որ մեղայ չասաց, ի հրոյն մէջն վառենայ (ՄՀԲ, 730), Երբ հաշտենաս ընդ ընկերիդ (ՄՀԲ, 841) Որ պարզ երեսօք երթանք առ աստուած հանց որ հաճենայ (ՄՀԲ, 841)* և այլն: Առավել կարևոր է, որ, միջինհայերենյան ածանցավոր նորակազմությունները ունեն քերականական մեկ սեռ[13]:

---

[11] **Բղխել**-նբ-բխեցնել. *Բղխեացէ սիրտ իմ զբան բարի (ԳՏՈ, 106),* չբ- դուրս հոսել, թափվել. *և աղբիւր ի բերանոյ նորա բխէր (ՄԳ Ա, 152):* **Փայլել**-նբ- փայլեցնել. *եւ փոխանակ մանկաց զտուրն փայլեալ 'ի պարանոցսն ընդունէին (Արծր., 191),* չբ- շողալ. *Փետուրք նորա փայլեն որպես զաստեղս (ՄՀԲ, 75)* և այլն:

[12] Հայտնի է, որ –են- ածանցով բայերը գրաբարում մեծ թիվ չէին կազմում և գործածության մեծ հաճախականություն չունեին՝ ի տարբերություն միջին հայերենի. այս շրջանում հիշյալ ածանցը շատ արտադրողական է *(տե՛ս **Աբրահամյան Ա.**, 243):*

Ի տարբերություն միջինհայերենյան՝ լծորդական փոփոխակներով ներկայացող պարզ տարբերակների՝ որոշ ածանցավոր նորակազմություններ հայերենում ստանում են քաղաքացիության իրավունք՝ շարունակելով գործածվել կազմությամբ պարզ նույնարմատ բայերի կողքին, հաճախ ձեռք բերելով նաև նոր նշանակություններ, ինչպես օրինակ՝ *հաճենալ, պնդանալ* բայերը:

[13]Որոշ դեպքերում թե՛ պարզ, թե՛ ածանցավոր բայերը ներկայանում են հնչյունական տարբերակներով, ինչպես **պնդել- պնդանալ** բայերի դեպքում. **պնտել**-նբ-պնդացնել, ամրացնել. *Նեղն ուզէ որ թուլցնէ և բնութիւնն ուզէ որ պնտէ,* չբ-ամրանալ, կարծրանալ-*Ձերդ շան միս ժանգոտել է և*

Շարունակենք քննությունը՝ անդրադառնալով գրաբարում սեռային զուգահեռություն ունեցող բայերին:

**Սատակել** կրկնասեռ բային զուգահեռ (նբ-սպանել. *հարեալ սատակեցին զնա (Արծր., 108)*, չբ-սպանվել, մեռնել. *Իսկ Վաղէս կայսր չարամահ սատակեցաւ (ԿԳՊ, 22))* գործածություն ունի **սատկիլ** (մեռնել (կենդանիների մասին)) չեզոք սեռի բայը.*Նա պիտի խլի ի տեղացն և սատկի (ՄՀԲ, 689)):* **Խորովել** կրկնասեռ բայը գործածվում է **խորվել** ներգործական սեռի բայի հետ, որն ունի *առանց ջրի եփել* նշանակությունը *Ա՛ռ հին խոզմիս ու խորվէ՛ ընդ դէմ կրակին (ՄՀԲ, 331)*, **վճարել** կրկնասեռ բայը՝ **վճառել**՝ նբ տարբերակի հետ՝ *վճար տալ* նշանակությամբ. *Ու երբ վճառէ, յայնժամ ազատէ զիւր տունն ի Յակոբէն (ՄՀԲ, 740)*, **հնազանդել** և **սողոսկել** բայերը՝ *ի* լծորդով տարբերակների հետ (**հնազանդիլ**, **սողորկիլ**)՝ *հնազանդվել* և *սողոսկել* նշանակություններով. *Զի նա հրամայեաց զմեր հնազանդեալ և զմեր սիրով կալեալ (ՄՀԲ, 432): ...և սողորկին յայն կրօնքն, հերետիկոս եղ (ՄՀԲ, 709)*, **հաւնենալ** ներգործական սեռի բայը՝**հաւանել** կրկնասեռ բային զուգահեռ՝ *հավանեցնել* նշանակությամբ. *Զոր եթէ հաւնենալ բան Սրոջինաքիյին (ՄՀԲ, 412)*[14] և այլն:

**Աղաչել** և **բարբաջել** ասացական բայերը գրաբարում կրկնասեռ են՝ նբ-*թախանձագին խնդրել*, չբ-*աղոթել* և *նբ-փուչ բաներ ասել, չբ-շաղակրատել* նշանակությունները նշանակություններով: Միջին հայերենի բառարանում հիշատակվում են որպես չեզոք սեռի բայեր՝ **աղչել** և **բաղբանջել** ձևերով. *և նա աղաչէր և ասէր (ՄԳ Ա, 142): Այժմ աղաչես ի յատենին (ՀԴՔ,165)*[15]*: Նստին ի փողոցի և բաղբաջեն լեզուաւ իւրեանց (ՄՀԲ, 107):*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս բայերը կրկնասեռ են նաև արդի հայերենում, մենք ավելի քան վստահ ենք, որ վերջիններս այդ հատկանիշը պահպանել են նաև միջին հայերենում: Հնարավոր է՝ միջինհայերենյան որևէ բնագրում **աղչել** և **բաղբանջել** բայերը գործածված են նաև քերականական երկրորդ սեռով, այլապես քիչ հավանական է, որ բայը միջին հայերենում կորցնի, իսկ արդի հայերենում նորից ձեռք բերի գրաբարյան կրկնասեռությունը: Նույնը պետք է ասել *հաջողել* և *երկարել* բայերի մասին:

---

*պնտել*, **պնդնալ**-չբ-*Աչից աղբյուրն աղտ և ճպիռ կու ժողվի և կու պնդնայ*, **պնտանալ**-չբ-պնդանալ, կապվել (փորի մասին). *Լինի...տքնութիւն, և պնտանայ փորյն (ՄՀԲ, 658):*

[14] **Խորովել** - նբ-առանց կրակի եփել. *Այր մի աղքատ խորովէր միս սակաւ յանապատին իւրում (Աղուէս., 86)*, չբ- տանջվել. *Այրին և խորովին առ սէր ընչիցն (Սարգ.,ՆՀԲ):* **Վճարել**-նբ-հատուցել. *Նա եմուտ 'ի նմա վճարեաց զիւր պէտսն (Աղուէս., 80)*, ավարտել. *Զի զործ ծածուկ մեքենային փոյթ և արագ վըճարեսցին (ՆԾՄ, 67)*, չբ-ավարտվել, վերջանալ. *Գինի մի՛ տուր և ոչ ծանր կերակուր, մինչև վճարի ջերմն (ՄՀՋՄ, 28):* **Հնազանդել**-նբ-հնազանդեցնել, ընկճել. *զամենեսեան հնազանդէր ընդ լծով ծառայութեան (ՊՅԿ, 97)*, չբ-հնազանդվել. *Որդիք ոչ հնազանդին ծնողաց իւրեանց... (ՄԳ Դ, 104):* **Սողոսկել**-նբ-մտցնել. *Ճարտարութեամբ բանին սողոսկէ զմիտս լսողացն (Լամբ..ՆՀԲ)*, չբ-սողոսկելով ներս մտնել. *մինչ զի 'ի պատուողացն ձեռանէ սողոսկեալ՝ անկանիմ յերկիր (ՄԳ Ա, 43):* **Հավանել-** նբ, չբ -անսալ, ականջ դնել, hոժարել. *Եւ ասէ 'ի մարդն այն, թե հաւանիս ինձ (Աղուէս., 117): Եւ այնմ ևս հաւանեալ ետ նմա հազար ևս դահեկան (Աղուէս., 31):*

[15]*Եւ աղաչէր զնա զի փարթամացուսցէ զնա (ՀՄՊՏ, 5): Եւ թէ որ աղաչէ զնուա զի մի վնասեսցեն (ԳՏՈ, 34): Վասն զի լսեմք՝ զորս բարբաջէք սնոտի օրինակաւ (ՊՏԺ, 153): Հոգին Քրիստոսի չէ ստտուած, որպէս նոքա բարբաջեն (ԳՏԳՀ, 91):*

**Յաջողել** գրաբարում կրկնասեռ բայը նույն նշանակություններով շարունակում է գործածվել նաև միջին հայերենում. նբ-հաջողեցնել. *Թէրևս յաջողեսցէ Աստուած 'ի ձեռն նոցա զգործ պատերազմին յաղթութեամբ (Արծր., 316),* չբ- հաջողություն ունենալ. *Եւ այց արար տէր նոցա, և յաջողեաց 'ի բարութիւնս (ՊՅԿ, 96):* Զուգահեռ գործածություն ունի նաև միայն չեզոք սեռի նշանակություններ (հաջողվել, իրագործվել) ունեցող **աջողիլ** տարբերակը. *Չի աջողեսցի գործ նորա (ՄՀԲ, 74):*

**Յերկարել**[16] կրկնասեռ բային զուգահեռ միջին հայերենում հանդիպում են ձևային նոր տարբերակներ, անգամ լծորդական փոփոխակով, ինչպես՝ **յերկայննալ, յերկայնալ, յերկաննալ** բայերը՝ *երկարանալ* նշանակությամբ. *Չի յերկայննայ և ի հետ ծռոյն ձգտի: Նշանն այն է, որ քաշվի ջղերն ու յերկայնայ: Որ ինքն կատարեալ յերկաննայ, և չի փոխի ի գունէն,* **յերկնալ** բայը՝ *երկար տևել* և **յերկրել** բայը՝ *երկարել* նշանակություններով. *Լաւն այն է, որ զայս չթողուն, որ յերկնայ: Եւ եթ յերկրէ առւոյտին տալն ու լինի դահ, նայ առ խս այդ լաւ է (ՄՀԲ, 552):*

**Նախատակել** (նբ-նախատակ դարձնել, չբ-նախատակվել.) և **սխալել** (նբ--պակասեցնել, չբ-սխալվել) կրկնասեռ բայերի[17] կողքին գործածվում են վերջիններիս միջինհայերենյան չեզոք սեռի տարբերակները՝ **նախատակիլ**-չբ- նախատակվել. *Որ նախատակեցաւ ի Շամշուտի բերդն (ՄՀԲ, 563),* **սղալիլ**-չբ-սխալվել. *Թագաւորն այն կու պիտի որ իւր ծառայն ոչ սղալի (ՄՀԲ, 705)* և այլն:

Գրաբարյան ձևը պահպանել, բայց բառիմաստային փոփոխություն է կրել **ծաղկել** բայը, գրաբարյան նբ *ծաղկեցնել* և չբ-*ծաղիկ տալ* իմաստները պահպանելով հանդերձ *(Նշանս տէրունեան ձրի մեզ զկեանքն ծաղկեաց զՔրիստոս (ՆՇՈ, 1003): Նախ ծաղկի և ապա առնու զպտուղն (ԳՏԳՀ, 721), Ահա եղև պայծառ զարուն, Ծաղկեաց այգին ու պաղչանին (ՀԹՏ, 139))* ձեռք է բերել նաև ներգործական սեռի միանգամայն նոր նշանակություն՝ *ձեռագրեր ծաղկանկարել. Ծաղկեաց զաւետարանս և գլխագրեց (ՄՀԲ, 341):*

**Ծփել** գրաբարյան նշանակություններով գործածվող կրկնասեռ բային զուգահեռ[18] միջին հայերենում գործածության մեջ է մտնում նաև **ծփել** նորակազմությունը՝ նբ-*քսել, շփել* իմաստներով. *Ծփէ՛ բարկ քացախով (ՄՀԲ, 351)* և այլն:

Այսպիսով, գրաբարում կրկնասեռ շուրջ 40 բայեր շարունակում են գործածվել միջին հայերենում ինչպես գրաբարյան ձևաիմաստային կառուցվածքով, այնպես էլ միջինհայերենյան տարբերակներով:

Ձևային փոփոխությունները սովորաբար արտահայտվում են լծորդության, կազմության, հնչյունական մասնակի տարբերություններով, իսկ բառիմաստա-

---

[16] **Յերկարել**-նբ-երկարացնել.*Նոյնպէս և արդարութիւն երբեմն յերկարէ զկեանս որպէս առ եզեկիա (ԳՏԳՀ, 292),* չբ-երկարանալ... *եւ յերկարեալ գործ պատերազմին հարուստ մի ժամ…. (Արծր., 40):*

[17] *Բազում վկայս Քրիստոսի սպան և նախատակեաց (Մարթին., ՆՀԲ, 403): Եւ հարիւր քառասուն և չորք հազարքն՝ որք նախատակեցան 'ի նեռնէն զորս յառաջն կնքեալ ասաց (ԳՏՈ, 318): Զթիւ երկնաւորաց դասուն սխալեցին (ՆԼ, ատ., 718): Այս մի անգամ սխալեցայ, Ահեղ ծով, ես պանդուխտ եմ, զքեզ աղաչեմ, խնձ ողորմեա' (ՀՄՊՏ, 62):*

[18] Ծփել-նբ-ծփացնել. *Անզգա ծփէ զմարմինն 'ի մէջ ալեաց զանազան պխտից (ՆԼ ատ., 1029),* չբ-ծփալ. *Վասն այլոց որ ի մէջ ալեաց մեղաց ծփին (ԳՏՔԱ, 99):*

յին փոփոխությունները բնութագրվում են իմաստային նոր առումներով, ընդ որում, իմաստափոխությունը արտահայտվում է գրաբարյան բառերի բազմիմաստության վերացմամբ:

Ինչպես ցույց է տալիս քննությունը, միջին հայերենը ընդունում է կրկնասեռ բայի գրաբարյան տարբերակը, որոշ դեպքերում զուգահեռաբար գործածում միջինհայերենյան ձևային կամ իմաստային նորակազմությունը՝ ստեղծելով մրցակցության հնարավորություն բայերի հին և նոր տարբերակների միջև: Սովորաբար այդ նոր տարբերակը նաև կրկնասեռ չէ, օրինակ՝ վերոհիշյալ 40 բայերից կրկնասեռություն ունի մոտ 15 բայ: Մյուս դեպքերում գործ ունենք կրկնասեռության չեզոքացման հետ[19]:

Քննության արդյունքները ներկայացնենք աղյուսակով.

| | ԳՐԱԲԱՐ | ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ | ԳՐԱԲԱՐ | ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ |
|---|---|---|---|---|
| | **Փոխել է ձևը կամ իմաստը, պահպանել է կրկնասեռությունը** | | **Փոխել է ձևը կամ իմաստը, չի պահպանել կրկնասեռությունը** | |
| **1** | **անյուսանալ** | ***անյուսել//իլ*** | **հատանել** | ***հատնիլ-չք*** |
| **2** | **երկիրպագանել** | ***երկրպագել*** | **բղխել** | ***բխալ-չք*** |
| **3** | **հաւասարել** | ***հաւսրել*** | **փայլել** | ***փայլալ-չք*** |
| **4** | **շաղել** | ***շաղղել*** | **կանգնել** | ***կայնել-չք*** |
| **5** | **սգալ** | ***սքալ*** | **վառել** | ***վառենալ-չք*** |
| **6** | **վայելել** | ***վայլել*** | **հաշտել** | ***հաշտենալ-չք*** |
| **7** | **օգտել** | ***օկտել*** | **սատակել** | ***սատկիլ -չք*** |
| **8** | **թքանել** | ***թքնել, թքնուլ*** | **հաճել** | ***հաճենալ-չք*** |
| **9** | **կարդալ** | ***կարդել*** | **արշավել** | ***արշաւավել-չք*** |
| **10** | **շնչել** | ***շնչալ*** | **մոտենալ** | ***մօտևորնալ-չք*** |
| **11** | **սովորել** | ***սորվել*** | **ցամաքել** | ***ցամքել-չք*** |
| **12** | **բրդել** | ***բրտել*** | **յերկարիլ** | ***յերկննալ-չք<br>յերկրել*** |
| **13.** | | | **յանդգնել** | ***անտգնիլ -չք*** |
| **14.** | | | **յաջողել** | ***աջողիլ- չք*** |
| **15** | | | **բարբաջել** | ***բաղբաջել- չք*** |
| **16** | | | **զբաղել** | ***զբաղիլ- չք*** |
| **17** | | | **սողոսկել** | ***սողորկել- չք*** |
| **18** | | | **պնդել** | ***պնդնալ -չք*** |
| **19** | | | **աղաչել** | ***աղչել- չք*** |
| **20** | | | **խորովել** | ***խորվել -նք*** |
| **21** | | | **վճարել** | ***վճառել -նք*** |
| **22** | | | **հաւանել** | ***հաւնենալ- նք*** |
| **23** | | | **կանչել** | ***կանչիլ -նք*** |
| **24** | | | **նահատակել** | ***նախատակիլ- չք*** |
| **25** | | | **սխալել** | ***սղալիլ -չք*** |
| **26** | | | **հնազանդել** | ***հնազանդիլ -չք*** |
| **27** | | | | |

[19] 3 բայեր՝ *խռովել, ծաղկել, ծփել,* ձևային փոփոխություն չեն կրել, բայց ձեռք են բերել միաժամանակյան նոր նշանակություններ, ընդ որում *ծաղկել* և *ծփել* բայերը պահպանել են կրկնասեռությունը:

Ինչպես վկայում է խնդրո առարկա բայերի ձևաիմաստային կառուցվածքների *գրաբար - միջին հայերեն – արդի հայերեն* համադրական քննությունը, այն բոլոր բայերը, որոնց միջինհայերենյան տարբերակները ունեն քերականական մեկ սեռ, կրկնասեռ չեն նաև արդի հայերենում (սովորաբար ունեն գրաբարյան ձևը):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լեզուներն իրենց զարգացման ընթացքում ավելի պարզ են դառնում, և յուրաքանչյուր իմաստի համար ստեղծվում է հատուկ ձև, ակնհայտ է դառնում միջին հայերենի ունեցած դերը հայերենում բայական նոր ձևերի առաջացման, յուրաքանչյուր բայական ձևով քերականական որևէ կոնկրետ իմաստ արտահայտելու միտումի ամրացման և տարածման գործում, որը արտահայտվում է ոչ միայն բայաձևերի պարզեցմամբ և ներգործական, կրավորական ու չեզոք (ե լծ.) սեռերի ձևական անջատումով, այլ նաև համակարգային մեկ այլ փոփոխությամբ՝ կրկնասեռության չեզոքացմամբ. գրաբարյան կրկնասեռ բայի կողքին միջինհայերենյան քերականական մեկ սեռ ունեցող տարբերակի գործածությունը հայերենի բայական համակարգի պարզեցման ճանապարհներից մեկն է նախանշում, որի արդյունքն ակնհայտ է արդի հայերենում[20]:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

**Աղուէս**.- *Աղուէսագիրք, Արարեալ յԵրեմիայ վարդապետէ արևելցւոց,* Յօրթագիւղ, 1827:
**Արծր** . - *Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունւոյ,* Կ. Պօլիս, 1852:
**ԳԲ - *Ղազարյան Ռ.,*** *Գրաբարի բառարան,* Եր., 2000 :
**ԳԺՏ** - ***Աբեղյան Մ.,*** *Գուսանական ժողովրդական տաղեր, հայրեններ և անտունիներ,* Եր., 1940:
**ԳՏՈ** - ***Գրիգոր Տաթևացի,*** *Գիրք որ կոչի Ոսկեփորիկ,* Կ. Պոլիս, 1746:
**ԳՏԳՀ** - ***Գրիգոր Տաթևացի,*** *Գիրք հարցմանց,* Կ. Պոլիս, 1829:
**ԳՏՔԱ** - ***Գրիգոր Տաթևացի,*** *Քարոզգիրք, Ամռան հատոր* Կ. Պոլիս, 1741:
**ԿԳՊ - *Կիրակոս Գանձակեցի,*** *Պատմութիւն հայոց*, Եր., 1961 (բնագրային համաբարբառ):
**ՀԴՔ** - *Հայ Դասական Քնարերգություն,* Եր., 1986:
**ՀԹՏ** - *Հովհաննես Թլկուրանցին եւ իւր տաղերը,* Թիֆլիս, 1892 :
**ՀՄՊՏ -** *Հայ միջնադարյան պանդխտության տաղեր,* Եր., 1979:
**ՄԳ Ա -** *Առակք Մխիթարայ Գոշի,* Վենետիկ, 1834:
**ՄԳ Դ** - ***Մխիթար Գոշ,*** *Գիրք դատաստանի,* Եր. 1975:
**ՄՀԲ - *Ավետիսյան Հ.,*** *Ղազարյան Ռ., Միջին հայերենի բառարան,* Եր., 2009:
**ՄՀՋՄ**- *Մխիթարայ բժշկապետի Հերացւոյ Ջերմանց մխիթարութիւն,* Վենետիկ, 1832:
**ՆԼ, ատ** - *Ատենաբանութիւն սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյ,* Վենետիկ, 1812:
**ՆՇՄ - *Ներսես Շնորհալի,*** *Ընտիր մատենագիր,* Վենետիկ, 1830:
**ՆՇՅՈ - *Ներսէս Շնորհալի,*** *Յիսուս որդի,* Վենետիկ, 1643:
**ՆՀԲ -** *Նոր բառգիրք հայկազեան լեզուի,* Վենետիկ, 1936–37:
**ՆՔ - *Նահապետ Քուչակ,*** *Հարյուր և մեկ հայրեն,* Եր., 1976:
**ՊՅԿ** - *Պատմագրութիւն Յովհաննու կաթողիկոսի ամենայն հայոց,* Երուսաղէմ, 1843:
**ՊՏԹ** - ***Պօղոս Տարօնացի,*** *Թուղթ ընդդէմ Թէոփիստեայ, Կ. Պօլիս, 1753:*

---

[20] Այն, որ մենք գործ ունենք համակարգային փոփոխության և շարունակական գործընթացի հետ, վկայում են միջին հայերենում կրկնասեռ խնդրո առարկա բայերից հինգը՝ *անհուսանալ, հավասարել, շաղել, փայլել, յոքել*, որոնք արդի հայերենում արդեն ունեն քերականական մեկ սեռ, այսինքն՝ դարձյալ ապրել են կրկնասեռության չեզոքացում:

**HRANUSH ZAKYAN**
*PhD, associate professor*
*gyumri state pedagogical institute*
hmardoyan71@mail.ru

# THE OLD ARMENIAN HERITAGE OF DOUBLE VOICE VERBS IN MIDDLE ARMENIAN

## SUMMARY

About 30 verbs out of 500 double voice verbs continue to be used in Middle Armenian with certain semantic changes. Form changes usually appear in sound changing , typical to Middle Armenian , they can also be expressed in verb ending and verb forming. While word-meaning changes are characterized with some new meanings , besides the meanings are limited :the main meaning is kept, the secondary and methaphoric meanings disappear. Middle Armenian variant isn't usually double voice either.

**ГРАНУШ ЗАКЯН**
*Кандидат филологических наук, доцент*
*Гюмрийский государственный педагогический институт*
hmardoyan71@mail.ru

# НАСЛЕДИЕ ДРЕВНЕАРМЯНСКИХ ГЛАГОЛОВ ДВОЙСТВЕННОГО ЗАЛОГА В СРЕДНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

## РЕЗЮМЕ

Из 500 глаголов двойственного залога древнеармянского языка, около 30 глаголов, имеющих семантические отличия, продолжают употреблятсья и в среднеармянском языке.

Видовые изменения обычно проявляются в вариантах слов древнеармянского языка:

Для среднеармянского же языка характерно звуковое изменение, которое может отражаться на сопряжении и структуре глагола. Так же может происходить частичное звуковое изменение. При семантическом изменении глагол принимает новое смысловое значение со смысловой ограбеченностью, связанной главным образом с сохранением основного смысла и потерей второстепенного или переносного значения.

**SIRANUSH KARAPETYAN**
*Gyumri State Pedagogical Institute*
siranushk@inbox.ru

# THE SPECIFIC CHARACTERISTICS OF DEPICTIVE PORTRAYING OF ARMENIAN GENOCIDE IN SPANISH LITERATURE

During 1880–1914, deep social and cultural changes emerged in the entire Western world. It may be called century crisis, as the most distinguishing characteristics were the technical and scientific progress, the rapid industrial development, the proliferation of social and anarchic theories, the crisis of positivism (objectivity) and rationalism, when man suspected whether science and intelligence were enough to explain and recognize the world. This mentality was later turned into existentialism, according to which, the human being was created for death and the latter inevitably caused an existentialist sorrow to man. This period was eventually ended with the First World War.

Generally the twentieth century was distinguished by its cruelty, during which 180 million people were killed, while natural disasters caused the loss of 24 million people[1], according to Baltasar Real, a member of Spanish Supreme Court. The professor of cultural studies at the University of Barcelona Joan Frigole Reixach's enormous cultural and anthropological research and studies allow describing the 20th century as «The Age of Genocide».

«The twentieth century has been characterized as «the Age of Genocide» and it probably keeps in contact with the collapse of various empires.»[2]

However, the process of dismantling and fragmentation of the past century first affects the person's inner world and the nascent effects, which make man become «a psychological structure with an extreme tension, which though seeks to be protected, sheltered from those forces and tension, puts every effort to neutralize and win them, it is in a constant risk of demolition, destruction and danger, faces the critical issue of «how to live»[3]. The deconstruction of human spiritual world is an evidence about the reason, consistently alienated from humanity and reminds of a two-edged pointer: on the one hand it is the beginning of the process of man's destruction by man (hence the wars, massacres, killings and human cruelty become common), on the other hand, the same effect causes deepening of «psychological collapse» and internal crisis.

This overall depressed mood also involved Spain and the Spanish of the century, because of the defeat of the Spanish and the loss of colonies, the struggle of Catalonia and Basque Country for independence in the Spanish-American War,

---

[1] **Guarch G.,** 2005, 7.
[2] **Joan Frigolé Reixach,** 2003, 8.
[3] **Edoyan H.,** 2009, 156.

which not only aggravated the relations within the country, but became deeper during the civil war. Therefore, those historical events in Spain laid a foundation for a long-lasting social and psychological crisis.

1. This is addressed to the *Contracting Parties,* and makes reference to the General Assembly Resolution 96 (I) dated 11 December 1946 according to which *genocide* is defined as a denial of the right of existence to entire human groups,[21] as a shock for the conscience of mankind. The analysis shows that albeit the opening of the UN Convention does draw attention to the damage caused to humanity *(has inflicted great losses on humanity),* it does not indicate the losses in the form of cultural and other contributions represented by human groups[22]. This must be one of the reasons why it sounds more generalized, hence less distinct. The neutrality of the final text as compared with the Draft, can be observed in the substitution of the adjectival word sequence *contrary to the spirit and aims of the United Nations* for it *is in violent contradiction with the spirit and aims of the United Nations* in the Draft. Obvious is the fact that although ***contrary*** and ***contradiction*** are elements, semantically more or less contiguous, nevertheless the presence of the adjective ***violent*** in the word group *violent contradiction* in Lemkin's Draft enriches the negative emotionality in the connotational aspect of the word *contradiction,* makes it more condensed, exacts and enhances the idea that the United Nations will never be indulgent and tolerant of any manifestation of genocide. Thus, the UN Convention sounds more reserved, hence somewhat neutral, which, generally speaking, is quite acceptable for official-documentary style. The rational and logical basis of an international document is, on the one hand, sure to exclude any confusion or arbitrary opinions. However, on the other hand, having in mind the utmost importance of the question of suppressing any genocidal intention for humanity at large we would choose to give preference to the formulation in the Draft as it expresses more determination, and intolerance of genocidal violence.

2. Similarly, we believe that the use of the attributive combination ***odious scourge*** in the UN text instead of ***odious crime*** in the Draft again weakens the impression, hence the necessity of intolerant attitude towards barbarity, towards horrendous genocidal events which the Contracting Parties should in any case be decisive not only to condemn, but also to prevent and punish. *Scourge* is a more general word[23] associated with wars, diseases, etc. But anybody who has a more or less clear idea of what a genocide is, let alone those who have experienced it and survived by chance, understand very well that a genocide is much more than just a cause of suffering, it is unimaginably horrible, in fact a crime, a very specific crime which

---

[21] This definition renders the difference between the notions of *genocide* and *homicide*. The latter, which also means an act of murder, is the denial of the right to live of individual human beings. Cf. ***Cambridge Advanced Learner's Dictionary*** (2008) Third edition. Cambridge: Cambridge University Press, p. 691.

[22] The first draft of the Convention (what we call Lemkin's Draft) worked out by the UN Secretariat where the Preamble attaches a lot of importance to cultural losses and includes it in the definition of genocide. Cf. <http://www.preventgenocide.org/law/convention/drafts/>Accessed [October 15, 2015].

[23] ***Oxford Advanced Learners Dictionary of Current English by A.S. Hornby*** defines *scourge* as «whip for flogging persons, cause of suffering, instrument of vengeance and punishment» (Oxford: Oxford University Press, 1974, p.761).

requires a very severe punishment, particularly in that it is usually intended and scrupulously pre-planned.

3. Many instances of such genocidal crimes have occurred, many racial, religious, political and other groups have been destroyed, either entirely or in part. Thus, the punishment of the crime of genocide is, indeed, a matter of international concern. Therefore all acts of genocide committed whether by private individuals, public officials or statesmen on national, religious, racial, political or any other above-mentioned grounds should be internationally punishable.[24]

4. Thus, as compared with the Preamble of Lemkin's Draft, the style of the opening part of the UN Convention is damped down. Besides, there are formulations in this piece of discourse, describing abstract collectivistic notions: *international law; the civilized world; all periods of history; humanity; mankind; international co-operation*, which, in a sense, diverge the attention of the addressee from concrete decisions and concrete actions.

Analyzing the Preamble from a pragmatic perspective, we can conclude that the above-mentioned communicative focuses have been preserved here. Hence, we can observe the doer of the desirable action *(The Contracting Parties)* and the deplorable action against which the Document was released. However, our analysis reveals a marked change in the pragmatic intent of the discourse. First of all, as different from the text of Lemkin's Draft Convention, the extract lacks the high degree of performativity due to the change in the structure. The given piece of discourse is presented in the form of an extended complex-composite sentence with a subordinate clause of manner, where the actions presented in the form of Participle I denote some past action *(having considered),* or state of the doer of action*(recognizing, being convinced)*. Interestingly, all of them are mental actions, done through one's power of mind, contrary to the performatives in the Draft, which denote locutive acts, that is verbal actions, like *proclaiming, pledging, appealing*, etc. As a result of the mentioned structural differences the obligation for the Contracting Parties to take certain desirable actions, highlighted in the Draft, is somewhat veiled in the text of the UN Convention. The last utterance of the extract is an explicit performative whereby the doer of the action performs a commissive act, namely, agrees to conform with the requirements coming next: *Hereby agree as hereinafter provided*. This act of agreement is a legal cliché ordinarily used in official documents.

The second communicative focus of the Preamble – the action of genocide, in the discourse of the UN Convention is quite naturally again presented with words having negative expressive-emotional-evaluative overtones which, however, are weaker than those used in the Draft. Thus, genocide is presented as *an odious scourge*, *a contrary action* which is condemned as it inflicts great losses.

---

[24] It is not a mere chance that the General Assembly Resolution 96 (I) invites Member States to enact the necessary legislation for the prevention and punishment of the crime of genocide and recommends that international cooperation be organized between them to facilitate the speedy prevention and punishment of it (Fifty-fifth plenary meeting, 11 December 1946. United Nations General Assembly Resolution 96 (1), The Crime of Genocide 1946, pp. 188-189).

The cognitive-pragmatic analysis of the piece of discourse also enables us to cognize the desirable conduct against the crime of genocide. The difference revealed between the two pieces of discourse again lies in the field of syntax and the logical structuring of the idea. Thus, the actions expected from the Contracting Parties are linguistically formulated with the help of passive constructions, whereby the doer of the action is veiled and, naturally, the prescribed actions, namely, condemning (*is condemned*), or requiring (*is required*) sound less resolute and urgent.

Our comparative analysis enables us to conclude that the wording of the opening part of the 1948 UN Convention is somewhat vague, and designed so as to produce a moderate perlocutionary effect – condemnation of genocide. However, for us from the point of view of the Armenian Genocide, which happened long before the ratification of the 1948 Convention, of particular interest is the final part of the Document which reads:

> **…,** *Recognizing that at all periods of history genocide has inflicted great losses on humanity, and Being convinced that, in order to liberate mankind from such an odious scourge, international co-operation is required.*

Indeed, there can be no doubt that the damage (physical, cultural, psychological, moral, etc.) inflicted on humanity by genocides is so great that the temporal category, in fact, loses its sense, for genocides must be avoided like the plague, irrespective of when and where they happen, and genocidal intents and attitudes should be weeded out of human mentality, as well as experience. Thus, this formulation in the Convention inspires belief that International law will one day recognize the liability of today's Turkey for the Genocide of Armenians accomplished by their predecessors. Therefore, vain are the attempts of the pro-denialist scholars who, on the pretext of the UN Convention being ratified only in 1951, reject the possibility of defining the 1915 horrendous events in Western Armenia as genocide. Pushing forward their formal arguments, they ignore a very important source of international law, namely – the customary international law. The latter, though unwritten, however is an established form of international norm (Opinio juris), the presence of which is borne out by the official declaration of Great Britain, France and Russia promulgated on 24 May 1915, where they defined the Armenian Genocide as a crime against humanity and declared the liability of the Turkish government for the crime.[25] There is another fact, too, to be taken into consideration: the Holocaust also occurred before the final adoption of the UN Convention on genocide, but it was recognized and condemned by International Tribunal. According to international law Turkey's liability cannot be of punitive nature. But, as a State responsible for the delinquent actions of its predecessors, Turkey must do its best to restore the situation that preceded the crime (restitution). If restitution is impossible to implement, it should provide adequate compensation (financial or material). If this is not possible either, it should finally seek reparation

[25] **Margaryan V.**, 2011, 331–339. <http://am.am/arm/news/142/hayoc-cexaspanutyuny-orpes-mijazgayin-hancagortsutyun.html> Accessed [May 2, 2016]

through satisfaction (which covers a range of acts beginning from a simple apology for damage or loss sustained, to territorial compensation). Thus, in this way the consequences of the crime could be recognized as fully eliminated.[26]

To sum up I would first of all like to agree that the 1948 Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide is one of the most important achievements of humanity, and of the experts in human rights. Alongside the legal definition of genocide, rooted in the Convention and confirmed in subsequent case law, there is a legal basis aimed at prevention and punishment of this most serious crime.

We also have to agree on how great the value of Raphael Lemkin's genocide discourse is, from both legal and humanistic points of view. Its paramount importance can never be repudiated, for it is intended to protect an essential interest of the international community.

However, as our comparative research shows, a somewhat restrictive approach has been applied to the creation of the final text, and some discursive features typical of the Draft language have been ignored. It is revealed in reformulated definitions which sometimes veil the clarity of ideas and the determined negative attitude towards all possible manifestations of genocide. As a result, lexical, morphological and syntactic changes introduced in the final text have reduced the strategic consistency of the text, weakened the expression of intolerance of genocides in the world and determination to punish the perpetrators whoever they be.

## BIBLIOGRAPHY

**Auron Y.,** 2004, *The Banality of Denial: Israel and the Armenian Genocide*. New Brunswick, NJ: Transaction Publishers.

**Berenbaum M.,** 2005, *The World Must Know: The History of the Holocaust as Told in the United States Holocaust Memorial Museum.* Baltimore, Maryland: John Hopkins University Press.

**Frieze, Donna-Lee,** 2010, *Genos – the Human Group.* // The Crime of Genocide: Prevention, Condemnation and Elimination of Consequences. Yerevan: Ministry of Foreign Affairs of RA.

**Lemkin R.,** 1945, *Genocide – A Modern Crime.*// Free World, Vol. 4, pp. 39–43.

**Lemkin R.,** 1946 *Genocide.*//American Scholar, Vol. 15, pp. 227–230.

**Lemkin R**., 1947 *Genocide as a Crime under International Law.*//American Journal of International Law, Vol. 41 (1), pp. 145–151.

**Schabas W.,** 2000, *Genocide in International Law: the Crimes of Crimes.*Cambridge: Cambridge University Press.

**Schabas W.,** 2014, *Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide.*//Audiovisual Library of International Law.

**Stone D.,** 2005, *RaphaelLemkin on the Holocaust.* //Journalof Genocide Research 4 (4), pp. 539–550.

[26] Harcazruyc: Vladimir Vardanyani. Shant TV, Armenia. 24 April, 2015. <https://www.youtube.com/watch?v=HQFwyqLLAIc> Accessed [April 30, 2016]

**ՍԵԴԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ**
*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*
*ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ*
sedagasparyan@yandex.com

# ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԸ ԵՎ 1948 ԹՎԱԿԱՆԻ ՄԱԿ-Ի ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ամփոփված են հատվածներ ՀՀ Գիտության պետական կոմիտեի հովանավորությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում կատարված ուսումնասիրությունից: Սույն ծրագիրն առնչվում է 1948թ. ՄԱԿ-ի կողմից ընդունված Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիային և գլխավորապես նպատակ ունի ուսումնասիրելու հիշյալ կոնվենցիայի շարադրանքի բառային, իմաստային, ոճական և գործաբանական առանձնահատկությունները՝ դրանք համեմատելով կոնվենցիայի լեմկինյան նախագծի հետ:

Վերոնշյալ փաստաթղթերի տեքստերը դիտարկվում են որպես ցեղասպանական դիսկուրսի նմուշներ: Լեզվական զուգադիր ուսումնասիրությունը, որը ներառում է ինչպես ընդհանուր անդրադարձներ, այնպես էլ այս խնդրի շուրջ առկա կոնկրետ տեսական մեկնաբանություններ, բացահայտում է մի շարք ճանաչողական- գործաբանական խնդիրներ, որոնք կապված են մարդկության մեծագույն ոճրագործություններից մեկի՝ ցեղասպանության հարցում պաշտոնական գրաքննության լեզվական արտահայտության հետ:

Փորձ է արվում ընդգծել Ռաֆայել Լեմկինի անուրանալի դերը միջազգային իրավունքի վերաձևակերպման գործում, որով նա աշխարհին ներկայացրեց մարդու իրավունքների միանգամայն նոր մեկնաբանություն:

Հայտնի է, որ ՄԱԿ-ի՝ 1948 թվականին ընդունված կոնվենցիան Միացյալ ազգերի կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի առաջին փաստաթուղթն է մարդու իրավունքների վերաբերյալ, որը ուշադրություն է հրավիրում ազգային, ռասայական, էթնիկ և կրոնական այն փոքրամասնությունների պաշտպանությանը, որոնք ապրում են բնաջնջման մշտական սպառնալիքի պայմաններում: Փաստաթուղթն ակնհայտորեն միտում ունի արմատախիլ անել ռասիզմը, խտրականությունն ու քսենոֆոբիան: Ավելին՝ այն ընդգծում է, որ մարդու իրավունքների պաշտպանության խնդիրը լուծելի է օրենքի շրջանակներում, եթե քրեական պատասխանատվության ենթարկվեն այդ իրավունքները ոտնահարողները: Այնուհանդերձ, Կոնվենցիան հաճախ է քննադատության ենթարկվում սահմանափակ ընդգրկման պատճառով: Հայտնի է, որ այն չի անդրադառնում մշակութային ժառանգության ոչնչացման վանդալիստական դրսևորումներին և չի ներառում նաև

մարդկանց քաղաքական և լեզվական խմբերի նկատմամբ կիրառվող բարբարոսական գործողությունների խնդրին:

Իրավունքի գիտակ Վիլյամ Շաբասի համոզմամբ՝ ցեղասպանությունը §ոճիրների ոճիրն է¦ և ուղղված է համայն մարդկության դեմ: Միջազգային իրավունքն, անշուշտ, որոշակի դժվարություն ունի մասսայական վայրագությունները կանխարգելելու հարցում, և, ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, այդ դժվարությունը կարող է հաղթահարվել ոչ այնքան §ցեղասպանություն¦ հասկացության սահմանները ընդլայնելու կամ Կոնվենցիան բարենորոգելու ճանապարհով, այլ այն գիտակցության ամրակայմամբ, որ այդ ոճիրը սերտորեն առնչվում է մարդկության դեմ կատարված ոճրագործությունների հասկացությանը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ցեղասպանության կոնվենցիայի ընդունման ճանապարհը դյուրին չի եղել: Այն իրականություն է դարձել մեծ թվով օրենսդիրների, իրավաբանների, քաղաքագետների համառ, կառուցողական ու համագործակցված ջանքերի շնորհիվ: Սակայն այս գործում հսկայական ավանդ ունի ծագումով հրեա, լեհ լեզվաբան ու օրենսգետ Ռաֆայել Լեմկինը (1900-1959), որն իր գործուն մասնակցությունը բերեց ցեղասպանության համաշխարհային պատմության ուսումնասիրման, այդ խնդիրը միջազգային իրավունքի դաշտ տեղափոխելու և միջազգային համագործակցության շրջանակներում այն քրեորեն պատժելի դարձնելու գործին:

Ռաֆայել Լեմկինը մեծ մտավորական էր, ժամանակակից բարոյագիտական մտքի հսկաներից, և, եթե ընդունենք, որ արևմտյան բարոյականությունը մարդկային դաժանություններին դիմակայելու ու դրանց դեմ ընդվզելու անվերջանալի պատմություն է, ապա Լեմկինը մարդկանց խմբերի դեմ իրականացված դաժանությունների դեմ և նրանց իրավունքների համար պայքարող ամենաաննկուն մարտիկն է: Լեմկինի տաղանդը դրսևորվեց միջազգային իրավունքը վերաձևավորելու, մարդու իրավունքների համաշխարհային ընկալման մեջ միանգամայն նոր մոտեցում առաջ քաշելու և, դրանով իսկ, մարդու իրավունքների պատմության վրա նշանակալի ազդեցություն գործելու հարցում:

Դեռևս համալսարանական տարիներից ի վեր Լեմկինին հետաքրքրել և խորապես հուզել է ցեղասպանության խնդիրը և անարդարություն ու բռնություն չհանդուրժող նրա երիտասարդ հոգում վճռականություն ծնել՝ դատապարտելու մարդկության դեմ պարբերաբար կիրառվող այդ անհանդուրժելի ոճիրը: Դեռևս ուսումնառության տարիներին նա հետևողական փորձեր է ձեռնարկել հայկական ջարդերի հարցը օրենսդրական դաշտ դուրս բերելու ուղղությամբ: Բազմաթիվ կարծիքներ կան այն մասին, որ Լեմկինի հետաքրքրությունն ու նախաձեռնողականությունը «ցեղասպանություն» հասկացության պարզաբանման, հստակ ձևակերպման, իսկ հետագայում նաև գիտաբառի ստեղծման ընթացքում նրա համար ելակետային են եղել հայերի և ասորիների՝ թուրքերի կողմից իրագործված բնաջնջման փորձերը: Իհարկե, կա նաև այն կարծիքը, թե §ցեղասպանություն¦ հասկացությունն առաջին անգամ գործածել և իրավական առումով կիրառության մեջ է դրել Արմին Վեգները իր “Vernichtung einer Rasse” աշխատության մեջ “Völkermord” գերմաներեն արտահայտությամբ (տես Ա. Մուշեղյան, Արմին Վեգները Ցեղասպանություն իրավական տերմինի հեղինակ: // Ազգ. No 7, 23. 04):

Ինչ էլ որ լինի ակնհայտ է, որ Ռաֆայել Լեմկինի դերն անգնահատելի է ցեղասպանություն երևույթը՝ որպես մարդկության համար նյութական ու բարոյական գերագույն սպառնալիք որակելու հարցում:

Ցեղասպանության 1948 թվականի ՄԱԿ-ի Կոնվենցիայի և Կոնվենցիայի լեմկինյան Նախագծի տեքստերի զուգադրական վերլուծությամբ պարզում ենք, որ Կոնվենցիայի վերջնական շարադրանքում անտեսված են լեմկինյան նախագծին բնորոշ բառային, ձևաբանական, շարահյուսական, ոճական կիրառություններ ու ճանաչողական ռազմավարություններ, որոնք միջազգային իրավունքի այս կարևորագույն փաստաթղթում առավել հստակ ու տեսանելի կդարձնեին միջազգային հանրության հիմնարար շահերը պաշտպանելու ՄԱԿ-ի վճռականությունությունը:

**СЕДА ГАСПАРЯН**
*Член-корреспондент НАА РА*
*Заведующая кафедрой английской филологии ЕГУ*
sedagasparyan@yandex.com

# РАФАЭЛЬ ЛЕМКИН И КОНВЕНЦИЯ ООН О ГЕНОЦИДЕ ОТ 1948 ГОДА

## РЕЗЮМЕ

В статье собраны фрагменты из исследования, проделанного в рамках проекта, осуществляемого при поддержке Государственного комитета науки РА. Целью данного проекта является исследование лексических, стилистических и прагматических особенностей текста принятой ООН в 1948 году Конвенции о предупреждении геноцида и наказании за него в сравнении с лемкинским Проектом конвенции.

Тексты вышеупомянутых документов рассматриваются как образцы дискурса о геноциде. Сопоставительное лингвистическое исследование, которое включает в себя как общие обсуждения, так и конкретные теоретические интерпретации, существующие по этой проблеме, выявляет ряд когнитивно-прагматических проблем, связанных с языковой реализацией официальной цензуры по поводу одной из страшнейших преступлений человечества – геноцида.

Делается попытка подчеркнуть неоспоримую роль Рафаэля Лемкина в деле преобразования международного права, в представлении миру совершенно новой интерпретации прав человека.

Известно, что Конвенция ООН от 1948 года – первый документ о правах человека Генеральной Ассамблеи Организации Объединенных Наций, который привлекает внимание к защите национальных, расовых, этнических, религиозных меньшинств, живущих в условиях постоянной угрозы уничтожения. Документ явно нацелен на искоренение расизма, дискриминации и ксенофобии. Более того, в нем подчеркивается, что проблема защиты прав человека может получить решение в рамках закона, если будут привлекаться к уголовной ответственности те, кто попирает эти права. Тем не менее, Конвенция часто подвергается критике за ограниченность охвата. Известно, что в ней не отражаются проблемы вандалистских проявлений уничтожения культурного наследия и варварских действий, применяемых по отношению к политическим и языковым группам людей.

По убеждению специалиста по праву Уильяма Шабаса, геноцид – «преступление преступлений» и направлен против всего человечества. Международное право, безусловно, имеет определенные трудности в вопросе предотвращения массовых зверств, и, как показывает исторический опыт, эти трудности могут

быть преодолены не столько путем расширения границ понятия «геноцид» или реформирования Конвенции, сколько путем укрепления сознания того, что это преступление тесно соотносится с понятием преступлений, совершаемых против человечества.

Исследование показывает, что принятие Конвенции о геноциде не было легким процессом. Она стала реальностью благодаря упорным, конструктивным и скоординированным усилиям многочисленных законодателей, юристов и политологов. Но в этом деле огромный вклад имеет польский лингвист и правовед еврейского происхождения Рафаэль Лемкин (1900-1959), который сыграл значительную роль в деле исследования мировой истории геноцида, перенесения этой проблемы в поле международного права и превращения геноцида в уголовно наказуемое преступление в рамках международного сотрудничества.

Рафаэль Лемкин был большим мыслителем, одним из великих представителей современной нравственной мысли, и если принять, что западная нравственность – бесконечная история противостояния человеческой жестокости и сопротивления ему, то Лемкин – самый неутомимый борец против жестокости, совершаемой по отношению к группам людей, и за их права. Талант Лемкина проявился в реформировании международного права, в выдвижении совершенно нового подхода в мировом восприятии прав человека и тем самым оказания значительного влияния на историю прав человека.

Еще с университетских лет Лемкина интересовала и глубоко трогала проблема геноцида, которая в его нетерпящей несправедливости и насилия молодой душе породила решимость осуждать это неприемлемое преступление, периодически совершаемое против человечества. Еще в годы учебы он предпринимал последовательные попытки в направлении введения в правовое поле вопроса массовых истреблений армян. Существуют многочисленные мнения о том, что в проявлении интереса и инициативы Лемкиным при разъяснении, четкой формулировке понятия, а в дальнейшем и при создании термина «геноцид» исходными для него были попытки уничтожения армян и ассирийцев турками. Конечно, есть также мнение, что понятие «геноцид» был впервые применен и введен в употребление в правовом значении Армином Вегнером в работе “Vernichtung einer Rasse” в выражении “Völkermord” (см. Ա. Մուշեղյան, *Արմին Վեգների Ցեղասպանության իրավական տերմինի հեղինակ:* // Ազգ. No 7, 23. 04).

Как бы то ни было, очевидно, что роль Рафаэля Лемкина неоценима в вопросе определения явления геноцид как высшей материальной и моральной угрозы для человечества.

При сопоставительном анализе текстов Конвенции ООН о геноциде от 1948 года и лемкинского Проекта Конвенции выявляем, что в конечном тексте Конвенции игнорированы характерные лемкинскому Проекту определенные лексические, морфологические, синтаксические, стилистические проявления и когнитивные стратегии, которые в этом важнейшем документе международного права сделали бы более четкой и видимой решимость ООН защищать фундаментальные права международного сообщества.

## REPORTS
## ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

**ԱՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ**
*Պատմական գիտությունների թեկնածու*
*Հնագիտության և ազգագրության ինստիտուտ*

# ԴՎԻՆԻ ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Դվինի միջնաբերդի հարավային մասի պեղումներն[1] սկսվել են 1977 թվականին և որոշ ընդմիջումներով շարունակվում են մինչև օրս: Շուրջ 30 տարվա ընթացքում իրականացված (մոտ հարյուր հազար քառակուսի մետր մակերեսով 6 մ խորություն) պեղումների արդյունքներով ի հայտ եկան քաղաքի բնակեցման իրարահաջորդ փուլերը ներկայացնող շերտագրական ու շինարարական հորիզոնները, բնակելի շինությունների հատակագծային լուծումները, նյութական մշակույթի բազմաբնույթ արժեքները, բացահայտելով Դվինի քաղաքաշինական ու քաղաքայնացման գործընթացի մանրամասներն ու առանձնահատկությունները: Հիշյալ հարցադրումների պատասխանն ակնկալելի էր «շերտագրություն» հիմնահարցի տրամաբանական լուծումից, որի ուսումնասիրությունը Դվինում, առհասարակ, մեծ դժվարություն է ներկայացնում պատմական իրարահաջորդ փուլերում շինարարական համահարթեցումների և խորացումների պատճառած վնասով:

Հայտնի է, որ քաղաքը բազում արշավանքների հետևանքով շարունակաբար ավերվել է, խաղաղ ժամանակներում վերակառուցվել, ընթացքում փորված հորերի, դրված թոնիրների, փոխված հատակների և նոր կառուցված պատերի հետևանքով, ենթարկվել է շերտագրական լուրջ խաթարումների: Այնուհանդերձ, քննախույզ աշխատանքով պարզվեց տեղամասի հատակագծային ցանցն ու նյութական մշակույթների ժամանակագրական սահմանագիծը՝ շերտագրական հետևյալ հաջորդականությամբ մ.թ.ա. IX–VIII դար, V–X դար, XI դար, XII–XIII և XIII դարի վերջ XIV դարեր (Աղ. 1, գծ. 1):

[1] Պայմանականորեն այն անվանում ենք հարավային բուրգ հետևյալ պատճառով: 1961–1962 թվականներին արշավախումբը ղեկավար՝ պրոֆեսոր Կ. Ղաֆադարյանի գլխավորությամբ բացահայտել էր միջնաբերդի պարսպապատի հարավային բուրգերից մեկը, որից հետո պեղահատվածի ողջ տարածքը անվանվեց «հարավային բուրգ»: Տե՛ս ***Ղաֆադարյան Կ.,*** 1982, 109–110, նկ. 86:

Պեղահատվածի հյուսիս արևելյան կողմում 0,6–0,7 մ հզորությամբ թույլ արտահայտված վերին շերտը վերաբերում է հետմոնղոլական (1236 թվականի արշավանքից հետո) ժամանակաշրջանին (XIII դարի երկրորդ կես և XIV դարեր), ուր բացահայտվեցին պարզունակ, ձեռքի տակ եղած շինանյութով հարմարեցրած կացարաններ (Աղ. 4, նկ. 1, 2): Հնագիտական նյութը XIII դարի սկզբի առարկաներից քիչ է տարբերվում (Աղ. 12, նկ. 2, 3): Էլդկուզյան Կըզըլ-Արսլանի (1186–1191) և Աբու Բեքրի (1191–1210) դրամազյուտերի որոշ քանակությամբ առկայությունն այդ շերտում վավերացրին մանր առևտրում շարունակվող պղնձե հատաձույլ հիշյալ դրամների շրջանառությունը:

Իհարկե, պեղումներով բացվեցին նաև կանոնավոր շինությունների ավերակներ, երբ 2007–2013 թվականներին հետազոտվեցին միջնաբերդի աղյուսե հաստահեղույս պարսպատի որոշ հատվածներ: Այդ ընթացքում պարզվեց, որ գործառնական նշանակությունը կորցնելուց հետո, պարսպի պահպանված պատերը տեղաբնակների կողմից օգտագործվել են՝ դրվել են թոնիրներ, փորվել են հորեր, շինվել հարթակներ և կենցաղային բնույթի այլ հարմարություններ, միջավայրը պիտանի դարձնելով բնակության համար (Աղ. 7, նկ. 2, 3, 4):

Պարսպատի անմիջական հարևանությամբ, պեղված այս տարածքից հայտնաբերվեցին խեցանոթների որոշ բեկորներ՝ խոյազլուխ ծորակ (Աղ. 10, նկ. 3), վերադիր զարդերով կնոջ դեմքով պատկերված գնդաձև սափորի մասեր (Աղ. 12, գծ. 1), որոնք բավարար հիմքեր տրամադրեցին իմաստավորված թեմատիկ նոր պատկերագրությամբ խեցեգործական ավանդույթի շարունակականությունն ամրագրելու համար:

Ի դեպ, Դվինի հետմոնղոլական շրջանի պատմա-հնագիտական ուսումնասիրությունն սկսվել է վերջին տարիներին, երբ Տիկնունի ամրոցի 1984 թվականի պեղումների ժամանակ հայտնաբերվեց շքայուսների մի հարուստ հավաքածու (Աղ. 8, նկ. 2):[2]

Այդ ժամանակաշրջանում Դվինի հայտնվելը Օրբելյանների տիրապետության սահմաններում ինքնին վկայում է XIII դարի վերջերի քաղաքի շարունակական բնակեցվածությունը:

Դարաբասի (նախկին Ըզուերծ) Ս. Աստվածածին եկեղեցու որմին 1273 թվականի շինարարական արձանագրությունը հիշատակում է, որ Տարսայիճը «... կողմնակալ է այսմ (իմա Սյունյաց նահանգի ... ի Բարգուշատայ մինչև ի դաշտն Դունայ ...»:[3] Նույն արձանագրությունը ավելի ընդարձակ ձևով հանդիպում է վիմական տարեգրում և Հ. Շահխաթունյանցի մոտ:

«Ես Տարսայիճս իշխան որդի մեծն Լիպարտին և ամուսին իմ Մինայ-խաթուն դուստր մեծին Ջալալ Դաւլին, կողմնակալ յայսմ նահանգի, զոր ետ մեզ Աստուած ի Բար գուշատայ մինչև ի դաշտն Դունայ ...»:[4]

Դվինի դաշտից մոնղոլական XIII–XIV պարսկական զտածո դրամների, միջնաբերդի արևմտյան հատվածից հայտնաբերված վրաց թագավոր Ուլու-Դավիթ

[2] **Ժամկոչյան Ա.,** 1990, № 12, 66–75: **Двин IV,** № 24, 2008, 15 182–183).

[3] Դիվան հայ վիմագրության, պրակ II, 1960, 52 և 114:

[4] Վիմական տարեգիր, 1913, 114, արձ. 1272 a, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Հ. II, 1842, 364:

(1247–1274) դրամի և XIII դարի վերջերին բնորոշ ջնարակած խեցանոթների, ինչպես նաև կոբալտի ներկանյութով հարդարված անոթների բեկորների (Աղ. 12, նկ. 3) գոյությունը ուսումնասիրված պեղահատվածում խորհել է տալիս, որ միջնաբերդի հարավային հատվածում բնակվել է շարքային բնակչություն, իսկ կառավարող կորիզը հաստատվել Տիկնունիում:[5]

XII–XIII դարերի շերտերը տեղամասում ամենահզորն էին: 1,6–2,0 մ խորությամբ շերտագրական կտրվածքում հատակագծային ցանցն արտահայտված է խիտ կառուցապատումներով՝ և տնտեսական, արտադրական ու բնակելի հարկաբաժինների խմբավորվման որոշակի սխեմայով:

Տեղամասի երկայնական առանցքով հարավից հյուսիս 1,0 մ լայնությամբ փողոցը պեղահատվածը բաժանել է երկու թևերի, որոնցից արևելյանը բաղկացած էր պարզունակ հատակագծով տնտեսական բաժանմունքներից (Աղ. 3, նկ. 2): Արևմտյանը ներկայացնում էր հատակագծային կանոնավոր լուծումով բնակելի, տնտեսական և արտադրական շինությունների համախումբ մի համալիր, ուր քարե հիմքերով պատերի վերնամասերը հում աղյուսից էին, հատակները տոփանված, սվաղած կավե շաղախով, երբեմն էլ սալարկած տափակ քարերով, որ տասնամյակների ընթացքում վերակառուցումների արդյունք էր և վկայում XII–XIII դարերում շինության երկարատև գործառնությունը (Աղ. 4, նկ. 4, աղ. 5, նկ. 3, 4, աղ. 6, նկ. 1, 2):

Դվինում շրջակայքի քարհանքերի պաշարների սղության պատճառով վաղ միջնադարյան ճարտարապետական մանրամասները՝ խոյակներ, խարիսխներ, խաչքարերի բեկորներ և մշակված արձանագիր քարերը երկրորդական օգտագործման են ենթարկվել (Աղ. 10, նկ. 9): Կարևոր է արևմտյան թևում արտադրական նշանակության արհեստավորի անկյան բացահայտումը (Աղ. 6, նկ. 1), ուր արձանագիր և բրգաձև մակերեսով տապանաքարերի գյուտերը վավերացնում են քարտաշ արհեստավորի գործունեության միջավայրը (ի դեպ բրգաձև մակերեսով տապանաքարերի կիսամշակ նմուշներ հայտնաբերվել են նաև տեղամասի այլ հատվածներից): Ենթադրելի է տեղամասում բազմագործառույթ արտադրամասերի տեղակայումը, որ պատճառաբանվում է տասնյակներով նուրբ որակի հախճապակե ուլունքների (Աղ. 8, նկ. 3), որոշակի չափորոշիչներով պատրաստված ապակե բաժակների (Աղ. 8, նկ. 1) և անգամ ջնարակած խեցեղենի արտադրական խոտանի կուտակումներով: Խնդրի լուծումն առայժմ մնում է ստվերում, քանի որ տեղում տակավին խեցեգործական հնոցներ և վառարաններ բացված չեն:

Հայտնաբերված Էլդկուզյան դրամները, որոնց որոշ մասը գտնվել է անմիջապես հատակին շերտը թվագրելու կռվաններ են և լրացվում են XII–XIII դարերի խեցեղենով (Աղ. 9, նկ. 1, 2, 5, 6, 7, աղ. 10, նկ. 1, 2) սնդկամաններով և մետաղե առարկաների գյուտերով (Աղ. 10, նկ. 8): Պեղահատվածի այս շերտի շինարարա-

---

[5] XIV դարում Դվինի բնակեցված լինելու ապացույցներից մեկը տեղում հայտնաբերված արաբերեն արձանագրությամբ տապանաքարն է, որ թվագրվում է XIV դարով: Տե՛ս **Хачатрян А.,** выпуск I, 1987, 51, նկ. 13:

կան տեխնիկայի, նյութական մշակույթի որակական տարբերությունները նախորդից ընկալելի են իբրև բնակչության սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման տարբեր մակարդակի դրսևորումներ:

XI դարի շերտագրական պատկերը տեղամասում վավերացվեց հատվածաբար, տարաբնույթ նշանակության շինությունների արձանագրումով: Շերտի թանձրության ստույգ հորիզոնը ներկայացնելն անհնար էր հետևյալ պատճառներով: Վերին XII–XIII դդ. շերտի խորացումները, որոնք կապված էին ստորին պատերի անխաթար վիճակն օգտագործելու կամ վերին շերտի թոնիրների ու հորերի միջամտության գործառույթով, մեծ ավերածություններ են պատճառել մշակութային հորիզոնին (Աղ. 5, նկ. 1, 2, 6): Այնուհանդերձ, որոշ մասերում պարզվեց, որ այդ շերտն ուներ 0,5–1,0 մ խորություն, չհաշված վերին 1,5–2,0 մ XII–XIII դարերի շերտի կտրվածքը: Երբեմն XI դարի պատերը հատվելով կազմում էին սենյակների բջիջներ, որոնց պատերի շարվածքը զուրկ էր կանոնավորությունից, բայց միանում էր ընդհանուր համալիրին, լրացնելով համակառույցի շինարարական ընդհանուր պատկերը: Նման բջիջներից մեկն ուներ տարաբնույթ քարերի անկանոն պատերից գոյացած հատակագիծ և շարվածքում կար տաշած քարի վրա Անի ինչոր արձանագրության մնացորդ (Աղ. 5, նկ. 5): Մեկ այլ հատվածում տաշած տուֆ քարերի երկրորդական օգտագործումով պատին կից հայտնաբերված ջնարակած ու հասարակ խեցանոթների բեկորները նույնպես XI դարով են թվագրում շերտը, սակայն, սոսկ, մեկ պատի առկայությամբ հնարավոր չէր կազմել սենյակի հատակագծային պատկերը (Աղ. 4, նկ. 3): Պեղահատվածի այս ու այն հատվածներից հայտնաբերված մեծ կարասները XI դարի խեցեգործության մշակումներից են և բացվել են XII–XIII դդ. շերտի տակ, իջեցվածքների պատճառով խաթարված մշակութային հորիզոնում (Աղ. 7, նկ. 6):

XI դարի շերտն այս տեղամասում հիմնավորվեց նաև ամրաշինական նշանակության պարսպապատի վերանորոգության փաստով, որը ժամանակի ռազմավարական մեծ կարևորություն ունեցող կառույցներից մեկն էր:

Ինչպես նշվեց 1961–1962 թվականներին Դվինի արշավախումբը պրոֆ. Կ. Ղաֆադարյանի ղեկավարությամբ պեղել էր հողդառատ անձրևների հետևանքով բացված միջնաբերդի պարսպապատի որոշ հատվածներ և բոլորաձև աշտարակներից մեկը՝ հարավայինը (Աղ. 6, նկ. 6):[6]

1977 թվականից սկսած այդ աշտարակի հարևանությամբ մեր աշխատանքների կենտրոնացումը նպատակ ուներ պարզաբանել կառուցապատումների տեսակը, վերլուծել հայտնաբերած մշակութային արժեքները, փորձելով լրացնել միջնադարյան քաղաքաշինության, ամրաշինության ու ռազմավարության բնորոշ հիմնախնդիրներ:

Ուսումնասիրությունն ամրագրեց այն իրողությունը, որ նախկին պարսպատի ամրակայման նպատակով XI դարում կրաքարերի ամուր շերտը՝ հենարանի վերածելով, հում աղյուսների մեծ զանգվածներով շարվել է պարսպապատի մի նոր շար (Աղ. 6, նկ. 5), որ 1236 թվականին մոնղոլների գրոհներից հետո փլուզվել է, տեղում ստեղծելով հում, աղյուսների հզոր կուտակումներ ու խախտել IX–X դարերի շերտը: Ամրաշինական բնույթի այս վերանորոգումը վերագրում ենք Դվինի

[6] **Ղաֆադարյան Կ.,** Հ. II, 1982, 109–110:

ամիրա Աբուլ Ասֆարի տիրապետության (1022–1049) ժամանակներին, որ XI դարում քաղաքական լուրջ շրջադարձերով ժամանակաշրջանում քաղաքի տերն էր: Հայաստանի պատմության այդ ժամանակաշրջանը հայտնի էր բարդ իրադարձություններով, հատկապես Բյուզանդիայի կողմից Անին նվաճելու նենգամիտ խարդավանքներով վարած քաղաքականությամբ: Հայոց Գագիկ I թագավորի մահից հետո, նրա որդիներ Հովհաննես Սմբատի և Աշոտի միջև գահի համար ներքաղաքական կռիվները վերջացան նրանով, որ հողատարածքների բաժանումից հետո 1022 թվականին Հովհաննես Սմբատը Անին կտակեց Բյուզանդիային, որ ճակատագրական ավարտ ունեցավ հայ ժողովրդի համար: Դեպքերի զարգացումն իր շրջանակների մեջ ներքաշեց նաև Դվինը: Ժամանակի հայ մատենագիրների տեղեկությունները այդ մասին սուղ են և հատվածական: Օրինակ Մատթեոս Ուռհայեցին Աբուլ Ասֆարին հիշատակում է քրիստոնյաների հանդեպ հատկապես Դավիթ Անհողինի նկատմամբ նրա ունեցած անհանդուրժողական միջամտություններով և Աղվանքի ռազմարշավների առիթով:[7] Մեկ այլ դեպքում պարսից Սուլթանին Դվինի Ս. Սարգիս եկեղեցուց քար հանելու և Պարսկաստան տանելու մասին հիշատակումով:[8] Արիստակես Լաստիվերտցին ընդգծել է Աբուլ Ասֆարի Աշոտի փեսա լինելու հանգամանքը,[9] իսկ Դվինի դեպքերը՝ բյուզանդական զորքի և Աբուլ Ասֆարի առճակատման կիզակետում հայտնվելու իրողությանը անդրադարձել է հպանցիկ, միայն ցավով է հիշատակում սպարապետ Վահրամ[10] Պահլավունու և նրա որդի Գրիգորի զոհվելը:

Դվինի հետ կապված XI դարի դեպքերի հիմնավոր աղբյուրը բյուզանդական է և անձնավորվում է Հովհաննես Սկիլիցեսի աշխատանքով:[11]

Նրա նկարագրությամբ 1040 թվականին, երբ իր մահկանացուն կնքեց Աշոտը, թագավոր հռչակվեց նրա 16 ամյա որդի Գագիկ II, որը Բյուզանդիայի հետ խաղաղ հարաբերություններ պահպանելով հանդերձ, չհանդուրժեց Հովհաննես Սմբատի կտակի վավերացումը: Սակայն մի քանի անգամ գրոհելով, Բյուզանդիան 1045 թվականին վերջապես գրավեց Անին: Մինչ այդ Կոստանդին Մոնոմախ կայսրը, նկատելով Գագիկի զգայուն դիրքը Անիի ճակատագրի հանդեպ պայմանագիր է կնքում Աբուլ Ասֆարի հետ և վերջինիս սեփականատիրական իրավունքով առաջարկում նվաճել Անիի տիրապետության տակ եղած ամրոցները: Սակայն 1045 թվականին Անին գրավելուց հետո Կ. Մոնոմախը ետ է պահանջում ամրոցները և մերժում ստանալով սկսվում է ռազմարշավը Դվինի դեմ: Մինչ նրանց հայտնվելը Աբուլ Ասֆարը, որ համարվել է ժամանակի հմուտ զորավարներից մեկը, բաց դաշտում փոխելով Ազատ գետի հունը պարսպի շուրջն ստեղծում է տղմոտ միջավայր, որ հայտնված բյուզանդական զորքի հիմնահատակ կործանման պատճառ է դառնում: Այստեղ է զոհվում և հայոց սպարապետ Վահրամ Պահլավունին և նրա որդի Գրիգորը: Այս ընդարձակ նկարագրությունից բացի բյուզանդական այս աղբյուրը հիշատակում է նաև Դվինի պարսպի մի մանրամասն, որ մինչև այժմ ուշադրության չէր արժանացել: Դա պարիսպի աշտարակի

---

[7] **Մատթեոս Ուռհայեցի**, 1991, 88:

[8] Նույն տեղում, 212–213:

[9] Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցւոյ, 1963, 63:

[10] Նույն տեղում, 96:

[11] Բյուզանդական աղբյուրներ Գ, 1979, 146–148:

վերնամասի պարագծով մեկ ատամնավոր քիվաշարքի առկայությունն է, որտեղից բյուզանդական զորքին նետահարել են Դվինի ռազմիկները:[12] Ամենայն հավանականությամբ, Դվինի պարսպատի նորոգության իրականացվել է այս դեպքերին նախորդող ժամանակներում:[13]

Դվինի պարիսպը XIX դարի ճանապարհորդների հուշերում և ակադ. Ն. Մառի պեղումների ժամանակ 1899 թվականին եղել է բարվոք վիճակում: Սակայն բնական աղետների և շրջակա գյուղերի բնակիչների կողմից հողի անխնա տարուբերումը մեծ վնաս է հասցրել կառույցին: 2007 թվականին պարսպատի առանձին հատվածներ հետազոտելիս բացահայտվեցին շիկակարմիր և մոխրագույն հողաշերտերով կտրվածքներ, որոնք, հավանաբար, անցյալի մարտական գործողությունների հետքերն են (Աղ. 2, գծ. 1):

IX–X դարերի շերտերը տեղամասում չափազանց ավերված են 893 թվականի երկրաշարժի հետևանքով պարսպապատի կրած փլուզումներից: Սակայն որոշ հատվածներում հայտնաբերվեցին Աբբասյան VIII–IX դարերի և Խալիդ Իբն Յազիդի (793–794) դրամներ, X դարի անգոբով նկարազարդված ջնարակած խեցեղեն անոթների բեկորներ (Աղ. 9, նկ. 3, աղ. 11, նկ. 1), IX դարի քթիկավոր ճիթաճրագը (Աղ. 10, նկ. 6) և այլ իրեր, որոնք ապացուցեցին մոտ 4 մ խորության վրա տվյալ շերտի առկայությունը:

Առանձին ուշադրության են արժանի կաղապարանախշ անոթի բեկորը և պղնձե կափարիչը, որոնք հարդարված են սասանյան ժամանակներից եկող դեմ առ դեմ զույգ թռչունների թեմատիկ պյուժեով և շարունակականություն է ունեցել IX–X դարերում (Աղ. 10, նկ. 4, 5):

Նախավերջին շերտը բնորոշ է մոնումենտալ մեծ շինության բացահայտումով: 1979 թվականին տեղամասի վերին շերտերը պեղելիս անսպասելի բացվեց 2,5 մ լայնությամբ հիմնավոր մի պատի անկյուն, որ մշակված և անմշակ տարաբնույթ քարերով շարվելուց հետո պատվել է կոկիկ ու հարթ սվաղով (Աղ. 4, նկ. 6, աղ. 7, նկ. 5): Տարիներ շարունակ այն պեղելով պարզվեց հարավային ավարտուն պատը 42,7 մ (Աղ. 7, նկ. 1) արևելյանը տակավին անավարտ 28,0 մ (Աղ. 4, նկ. 5), իսկ արևմտյանը 6,0 մ չափերով (Աղ. 6, նկ. 3, 4): Այսօր էլ այդ շինության մակարդակին հասնելու համար պեղումները շարունակվում են վերին շերտում (Աղ. 1, գծ. 2):

Շինության շերտագրական կառուցվածքը բացահայտելու համար արևելյան պատին կից կպած քառակուսիում 5x5 չափերի խրամափոսի պեղումների արդյունքներով հիմնավորվեց կառույցի մ.թ.ա. IX–VIII դարերի շերտի վրա կառուցված լինելն ու մի քանի վերակառուցումներ անցնելու գործառույթը (Աղ. 2, գծ. 2, աղ. 3, նկ. 1): Բուն շինության տարածքից հայտնաբերված նյութի գույքակազմը`

---

[12] Անդ., էջ 147:

[13] Հայտնի է, որ Շեդադդյանները ժամանակաշրջանի անհանգիստ քաղաքական իրավիճակից ելնելով, XI դարից սկսած ամրաշինական կառույցներին մեծ կարևորություն են հատկացրել: Եթե Դվինում, ելնելով քարի սղությունից Աբուլ-Ասվարը պարիսպը վերանորոգել է հումաղյուսով, ապա նրա հաջորդ Մանուչիհրը 1064 թվականին աշտարակը կառուցել է քարից, տե՛ս **Хачатрян А.,** 25, նկ. 24, a, б, իսկ 1174 թվականին Շեդադդյան սուլթան Իբն Մահմուդ Շավուրին Դաշտադեմում (Թալին) դղյակը վերակառուցելով ամրոցի ավելացրել է աշտարակներ Անիի կառավարման տարածքում ընդգրկելով նաև Արագածոտնը (տե՛ս **Սարգսյան Գ.Մ.,** 2007, № 3–4, 35:

եղևնազարդ գոտիներով կարասների, բլթակավոր ապակիների բեկորներ ու կղմինդրների մասեր են, որոնք ստույգ թվագրվում են V–VII դարերով և բնական է, շինությունն էլ այդ ժամանակներին վերագրելը: Շինության գործառնական նշանակությունն առայժմ հստակ չէ՝ զորակայան, մաքսատուն, ջրավազան և այլն, որ կպարզվի առաջիկա պեղումների արդյունքներով:

Հայտնի է, որ հայ պատմիչների հիշատակությունները աշխարհիկ շինությունների վերաբերյալ սուղ են: Արդ, ո՞ւմ կողմից կարող էր վաղ երկաթի (մ.թ.ա IX–VIII) շերտի վրա կառուցվել մոնումենտալ այս շինությունը: Առաջարկում ենք վարկածներ, որոնք վերջնական լուծումներ չեն հավակնում, սակայն պատմական էքսկուրսներով և համեմատական վերլուծությամբ կփորձենք որոշ բացահայտումներ իրականացնել:

Առաջին վարկածով շինության կառուցումը կարելի է վերագրել պարսից արքա Խոսրով Նուշիրվանին (531–579), որն ըստ արաբ պատմիչների « ... շենացրեց Դվին քաղաքը ...»:[14] Իսկ Սեբեոսն առանց մանրամասնելու նրան «խաղաղասեր և աշխարհաշեն» է համարում:[15]

Կառույցի հիմնադրումը թերևս, Սմբատ Բագրատունու շինարարական գործունեությունը վերագրվի 608 թվականին: Սեբեոսը և Հ. Դրասխանակերտցին հիմնականում մանրամասնում են նրա հոգևոր կառույցների՝ Էջմիածնի, Դվինի Ս. Գրիգորի վերակառուցումները և նոր կաթողիկոսի կարգումը Դվինի հայրապետական աթոռին: Սակայն Սեբեոսի մի փոքրիկ ակնարկը « ... Եւ շինեալ զերկիրս նորոգեաց վերստին»[16] արտահայտությունը, որն ուղղված է Սմբատ Բագրատունու իրականացրած շինարարական գործին ինչ-որ չափով վերագրելի չէ նրա հոգևոր շինարարությանը: Այս հարցադրումը շարունակական հետազոտություն է պահանջում և ստուգազրելի է: Արամ Քալանթարյանը Կենտրոնական թաղամասում մուտքի մոտ բացված ջրատար խողովակաշար ցանցը վերագրում է Սմբատ Բագրատունու բարենորոգման կառուցապատումներին, շեշտելով Սմբատ Բագրատունու աշխարհիկ շինարարական գործունեությունը:[17]

Դվինը մարզպանական Հայաստանի կենտրոնն էր V–VII դարերում և կենտրոնական իշխանության հետ ապրել է քաղաքական սրված կամ խաղաղ փուլերով: Մարզպանի կարգավիճակով Սմբատ Բագրատունի հայտնվելը, կապված էր Խոսրով Փարվեզի (590–628) գահակալության ժամանակների քաղաքականությամբ: Վերջինս հայտնի էր հայ դավանանքի հանդեպ ունեցած բարյացակամությամբ և, առհասարակ, հանդուրժողական վերաբերմունք ուներ մարզպանական Հայաստանի հետ կապված դրական բոլոր գործառույթների հանդեպ:

Դվինի հարավային պարիսպի հարևանությամբ բացված մոնումենտալ այս կառույցը կարող էր միայն Կենտրոնական իշխանության, պետականորեն ծրագրված արտոնությամբ կառուցվել: Այդ մասին կարևոր է Մխիթար Գոշի դատաս-

---

[14] Արաբական աղբյուրներ, 2005, 448:
[15] Պատմութիւն Սեբեոսի, 1979, 69:
[16] Նույն տեղում, 67:
[17] **Ղաֆադարյան Կ., Քալանթարյան Ա.,** 2002, 48:

տանագրքի հետևյալ ձևակերպումը « ... նույնպէս շինել քաղաք և բերդ և կամուրջս շինել մեծամեծ գետոց թագաւորաց լիցի, և հոգետուն և իջևանաց տունս և այնոցիկ որ ընդ հրամանաւ նոցա լիցի»:[18]

Պեղումները շարունակվում են և նոր զյուտերով ակնկալվում են Դվին քաղաքի Հարավային Բուրգ տեղամասի վերաբերյալ պատմա-հնագիտական նոր բացահայտումներ:

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ


Արաբական աղբյուրներ, Գ., Արաբ մատենագիրներ, Թ.-Ժ դարերի, թարգմ. Առաջ և ծանոթ. **Ա. Տեր-Ղևոնդյանի**, Երևան, 2005:

Բյուզանդական աղբյուրներ Գ, Հովհաննես Սկիլիցես (Թարգմ. բնագրից և ծանոթագր. **Հրաչ Բարթիկյանի**, Ե., 1979:

Դիվան հայ վիմագրության, պրակ II, Սյունիքի, Ղափանի և Գորիսի շրջաններ, Ե., 1960, էջ 52 և 114:

**Ժամկոչյան Ա.,** Ճարտարապետական հարդարանքի նմուշներ Տիկնունի ամրոցին, Լրաբեր հասարակական գիտությունների, 1990, № 12, էջ 66–75:

**Ղաֆադարյան Կ.,** Դվին քաղաքը և նրա պեղումները 2, ՀՍՍՀ ԳԱ Հնագիտական արշավախմբի 1951–1972 թթ. աշխատանքների արդյունքները, Երևան:

**Ղաֆադարյան Կ.,** Դվին քաղաքը և նրա պեղումները, Հ. II, Ե., 1982:

**Ղաֆադարյան Կ., Քալանթարյան Ա.,** Դվին քաղաքը և նրա պեղումները (1973–1980), Դվին II, Երևան, 2002:

**Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, աշխատասիրությամբ ***Հ. Բարթիկյանի***, Երևան, 1991:

**Մխիթար Գօշ,** Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880:

Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցւոյ, աշխատասիրությամբ **Կ. Յուզբաշյանի**, Երևան, 1963:

Պատմութիւն Սեբեոսի, աշխ., Գ. Աբգարյան, Ե., 1979:

**Սարգսյան Գ.Մ.,** Դաշտադեմի ամրոցը հայ ամրոցաշինության եզակի կառույցի զարգացման փուլերը, «Հայ արվեստ», 2007, № 3–4, էջ 35:

Ստորագրութիւն Կաթուղիկե Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, (աշխ. Յ, Եպիսկոպոսի Շահխաթունեանց), Հ. II, Էջմիածին, 1842:

Վիմական տարեգիր, Ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, Կազմեց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 114, արձանագրություն 1272 а:

Двин IV, Город Двин и его раскопки (1981–85 гг.), Археологические раскопки Армении № 24, Е., 2008, 15 182–183.

**Хачатрян А.,** Корпус арабских надписей Армении VIII–XV вв., выпуск I, Ереван, 1987, էջ 51, նկ. 13:


[18] **Մխիթարայ Գօշի**, 1880, 304:



Նկ. 1.


Նկ. 2.

Նկ. 3.

Նկ. 4.

Նկ. 5.

Նկ. 6.





Նկ. 1.

Նկ. 2.


Նկ. 2.

Նկ. 3.


1
2
3
4
5
6
7


1
2
3
4
5
6
7
8
9
10


1
2
1


1
2
3

**AGAVNI ZHAMKOCHYAN**
*PhD in History*
*Institute of Archaeology and Ethnography NAS RA*

# THE EXCAVATIONS AND THE STRATIGRAPHY AT THE SOUTH PART OF DVIN'S CITADEL

## SUMMARY

The article deals with the excavations carried out during 30 years at the South section of Dvin's citadel. The results indicate the progressive urban development of the site in consideration of the building construction and the detailed analysis of the character of the archaeological data. These circumstances are highly important to discuss the complicated field of the stratigraphy. The layers are disturbed by the pits dug from the upper strata, which mixed and changed the chronological traces. First of all the author attempts to justify the layer after the changes when the Mongols invaded Armenia in 1236.

Based on facts new details referring to that period at the site were discovered. Especially the reports of Armenian historical sources and inscriptions are important. As a result the article also shows a number of specific features which fundamentally differentiate this layer from the others.

The XII–XIII century layer is high powered and differs from the building point of view and was a further development in the history of archaeology. A narrow street divides the section into East and West parts. The west part is complicated in architectural means – rooms, walls on stone basis, continued whilh raw bricks, the floor made of clay and smoothed surface, or layed whith slabs. The XI century layer represents some small rooms and the defensive wall which was constructed in the XI century when the byzantine king K. Monomakh organized the military campaign against the ruler of Dvin Abul-Asvar. Though a comprehensive study of the data survives in the sources, the author presents new details providing the reason why the defensive wall was reconstructed.

